ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և 2017 թվականի գերակա խնդիրների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսվել էր 12 միջոցառում (միջոցառումներն առնչվում են անտառային ոլորտի բարեփոխումների և բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգերի, գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգի, սննդամթերքի անվտանգության ոլորտի կարգավորմանը վերաբերող իրավական ակտերի մշակմանը): Բոլոր միջոցառումները կատարվել են սահմանված ժամկետներում: Նախարարության համար սահմանվել էր թվով 22 գերակա խնդիր, որոնք հիմնականում վերաբերել են պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գներով մատակարարմանը, սերմնաբուծական տնտեսությունների միջոցով վերարտադրված որակյալ սերմերի մրցակցային գներով մատակարարմանը, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավմանը, գյուղատնտեսական արտադրանքի իրացմանը, ագրարային ոլորտում արտաքին ներդրումների ներգրավմանը, մասնավոր ներդրումների հավաքագրման մեխանիզմների ստեղծմանը, անտառների կայուն կառավարման ապահովմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավմանը և այլ խնդիրների լուծմանը: Նշված միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացվում է առանձին՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N 803-Ն որոշմամբ սահմանված ձևաչափով:

2. Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 811.7 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին 3.9 %-ով: Համախառն արտադրանքի կրճատումը պայմանավորված է բուսաբուծության ճյուղում համախառն արտադրանքի որոշակի նվազմամբ, որը գլխավորապես հետևանք է անբարենպաստ բնակլիմայական պայմանների, մասնավորապես՝ երկարատև ցուրտ ձմեռ, կարճ գարուն, բազմամյա միջինից բարձր ջերմաստիճաններով շոգ ամառ և սակավաջրություն: Իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղատնտեսական տարվա որոշակի ետ ընկած լինելը: Գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված տնտեսական վերջնական ցուցանիշները հնարավոր կլինի ներկայացնել տարվա արդյունքների ամփոփումից հետո:

Ըստ առանձին ոլորտների կատարված աշխատանքների արդյունքներն են՝

<u>Բուսաբուծություն</u>

3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 459.3 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին 7.9 %-ով:

4. Ըստ օպերատիվ տվյալների 2017 թվականին գրանցվել է պտղի և հատապտղի ու խաղողի արտադրության ծավալների աճ, համապատասխանաբար՝ 39.5 և 12.4 %-ով: Որոշակի նվազել է հացահատիկային մշակաբույսերի, բանջարեղենի և կարտոֆիլի արտադրությունը:

5. 2017 թվականին ճյուղում շարունակվել են, ինչպես նաև սկսվել են իրականացվել մի շարք նոր ծրագրեր:

6. **«Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման 2017 թվականի ծրագիր»** շրջանակներում ՌԴ-ից ներկրվել է 1710 տոննա առաջին վերարտադրության գարնանացան սերմացու (200 տոննա գարնանացան ցորեն, 13 տոննա հնդկացորեն, 7 տոննա ոլոռ, 5 տոննա սիսեռ, 1000 տոննա գարնանացան գարի, 5 տոննա եգիպտացորեն, 10 տոննա առվույտ և 240 տոննա կորնգան), իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից գնվել՝ 230 տոննա գար-

նանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: Հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով սերմը հատկացվել է պետության կողմից ձեռք բերված արժեքից ցածր գներով՝ գարնանացան ցորենի մեկ կիլոգրամը՝ 150, հնդկացորենի՝ 500, ոլոռի՝ 300, սիսեռի՝ 500, գարնանացան գարու՝ 130, եգիպտացորենի՝ 350, առվույտի՝ 1500 և կորնգանի՝ 370 դրամ արժեքով: 2017 թվականին հողօգտագործողներին բաշխվել է շուրջ 89.1 տոննա գարնանացան ցորենի, 1.78 տոննա հնդկացորենի, 7.0 տոննա ոլոռի, 3.45 տոննա սիսեռի, 670.2 տոննա գարնանացան գարու, 2.4 տոննա եգիպտացորենի, 5.1 տոննա առվույտի և 64.0 տոննա կորնգանի սերմացու: Մնացած խմբաքանակը պահեստավորված է 2018 թվականի գարնանը հանրապետության հողօգտագործողներին տրամադրելու նպատակով:

7. Գյուղատնտեսական մշակաբույսերի անհայտ ծագման սերմերի օգտագործման բացառմանը և նոր սորտերի շրջանացմանն է նպաստել **«Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի»** իրականացումը, որի շրջանակներում 2017 թվականի ընթացքում ստուգվել է գյուղատնտեսական մշակաբույսերի 12403.1 տոննա սերմ, որից հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի՝ 6841.7, բանջարբոստանային մշակաբույսերի՝ 0.4, արմատապտուղների և պալարապտուղների՝ 5284.5, կերային մշակաբույսերի՝ 265.5, դեկորատիվ մշակաբույսերի 0.4 և այլ մշակաբույսերի՝ 10.6 տոննա սերմ: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս նաև սորտափորձարկումների միջոցով ընտրել և ՀՀ գյուղացիական տնտեսությունների համար երաշխավորել բույսերի նոր արդյունավետ սորտեր, որոնց օգտագործումը կապահովի բարձր և կայուն բերքատվություն:

8. **«Բույսերի պաշտպանության ծառայություններ ծրագրի»** շրջանակներում շուրջ 162500 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 13 տոննա «Ռոդիֆակում Ս» մկնասպան միջոց: 2017 թվականի գարնանը և աշնանը, հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ համայնքներում հողօգտագործողների կողմից մկնանման կրծողների դեմ պայքար է իրականացվել շուրջ 113.5 հազ. հա վարելահողերում և բազմամյա տնկարկներում, որի համար մարզերին անհատույց հատկացվել է 9078.5 կգ «Ռոդիֆակում Ս» մկնասպան միջոցը: ՀՀ Արարատի մարզի՝ Երասխ, Նարեկ, Պարույր Սևակ, Քաղցրաշեն, Սուրենավան, ՀՀ Վայոց ձորի մարզի՝ Ջերմուկ, Գնդեվազ համայնքներին և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ին անհատույց հատկացվել է 188 լիտր «Ցիպեր Մաքսի» միջատասպան միջոց, որով համայնքներում պայքար է իրականացվել մորեխներով վարակված շուրջ 1250 հա վարելահողերի վրա: Իրականացված միջոցառումների արդյունքում հանրապետությունում բուսասանիտարական վիճակը եղել է կայուն:

9. **«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի»** շրջանակներում 2017 թվականի ընթացքում հետազոտվել է 157 համայնքի գյուղատնտեսական նշանակության 88287 հա հողեր: Հետազոտվող տարածքից վերցված 29.4 հազ. հողանմուշում կատարվել է 74.5 հազ. փորձաքննություն: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել է 165 ագրոքիմիական քարտեզ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: Ծրագիրը հնարավորություն է տալիս 5 տարվա ընթացքում հանրապետության բոլոր համայնքների հողերը ենթարկել ագրոքիմիական հետազոտման, կազմել խոշոր մասշտաբի ագրոքիմիական քարտեզներ (բույսերի սննդառության համար կարևոր սննդատարրերով ապահովվածության մասին), մշակել պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք տրամադրվում են համայնքներին:

10. **«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար ծրագրի»** շրջանակներում ՀՀ մարզերի հողօգտագործողների վճարունակ պահանջարկի հիման վրա նախատեսված էր հատկացնել

34882 տոննա ազոտական (2944.1 տոննա՝ 2016 թվականի մնացորդ) 983 տոննա ֆոսֆորական (504.2 տոննա՝ 2016 թվականի մնացորդ) և 903 տոննա կալիումական (559.4 տոննա՝ 2016 թվականի մնացորդ) պարարտանյութ: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 878.1 մլն դրամ, որից ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պայմանագրային հիմունքներով 673.3 մլն դրամ որպես սուբսիդիա նախատեսել է հատկացնել «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ընկերություններին և 204.8 մլն դրամ՝ դրամաշնորհ, համայքներ տեղափոխման և բեռնաթափման աշխատանքներն իրականացնելու համար: Հողօգտագործողներին 50 կգ քաշով 1 պարկ ազոտական պարարտանյութը տրամադրվել է 6000 դրամ (շուկայական գինը 7000 դրամ), իսկ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութը՝ 7000 դրամ արժեքով (շուկայական գինը համապատասխանաբար 13250 և 10900 դրամ): 2017 թվականին հողօգտագործողներին բաշխվել է շուրջ 28.5 հազ. տոննա ազոտական, 504.2 տոննա ֆոսֆորական, 903.1 տոննա կալիումական պարարտանյութ:

11. **«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրի»** շրջանակներում պայմանագրային հիմունքներով, որպես սուբսիդիա, մատակարարին 1 լիտր դիզելային վառելիքի դիմաց տրամադրվել է 34.3 դրամ՝ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխան մինչև 5 մլն լիտր դիզելային վառելիքի՝ 1 լիտրը 280 դրամ արժեքով հողօգտագործողներին վաճառելու համար: 2017 թվականին հողօգտագործողներին տրամադրվել է 3.071 հազ. լիտր վառելանյութ:

12. ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ իրականացվող **«Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանում և կայուն օգտագործում» ծրագրի** շրջանակներում 2017 թվականի ապրիլին արտերկրից հանրապետություն է ներմուծվել խաղողի ֆիլոքսերադիմացկուն 6 սորտերի պատվաստակալների 14500 կտրոն: Ներմուծված կտրոններով կիլչեցումից հետո, «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում հիմնվել է 2 հա ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների մայրուտ և 0.1 հա տնկարան:

13. **Պտղատեսակների շուրջ 50 հեկտար ինտենսիվ այգիների հիմնման նպատակով ցածրաճ, բարձրարժեք տնկանյութի արտադրության** նախապատրաստման աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի N 723-Ա որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքում գտնվող՝ 8.0 հա գյուղատնտեսական նշանակության պետական սեփականություն հանդիսացող հողամասը հետ է վերցվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից և 25 տարի ժամկետով վարձակալության է տրամադրվել «Ագրոինտեքս» ՍՊԸ-ին, որը ինտենսիվ այգիների համար արտադրելու է կլոնային պատվաստակալների վրա պատվաստված ցածրաճ տնկիներ:

ՀՀ կառավարության մեկ այլ՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1470-Ա որոշմամբ սահմանվել է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքում գտնվող՝ շուրջ 15 հա գյուղատնտեսական նշանակության պետական սեփականություն հանդիսացող հողամասն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել «Նորատունկ» ՓԲԸ-ին, որը պարտավորվել է 2018-2019 թվականների ընթացքում նշված հողատարածքի վրա ձևավորել ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ցուցադրական տնկարան, և 2-րդ տարվանից սկսած՝ արտադրել կորիզավոր, հնդավոր և այլ պտղատեսակների բարձրորակ, ժամանակակից ինտենսիվ այգեգործության պահանջներին համապատասխան տնկիներ և արմատակալներ՝ տարեկան շուրջ 100 հազար հատ: Նշված ընկերությունների կողմից արտադրված տնկիները և արմատակալները բավարար են 50 հեկտար ինտենսիվ այգիների հիմնման համար:

<u>Անասնաբուծություն</u>

14. 2017 թվականին արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների որոշակի աճ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2017

թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անասնաբուծության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 352.4 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 2.0 %-ով: Աճը հիմնականում ապահովվել է կաթի և մսի արտադրության ծավալների ավելացման հաշվին:

15. Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, **«Տավարաբուծության զարգացման ծրագիրը»**, որի շրջանակներում 2007-2016 թվականներին եվրոպական երկրներից հանրապետություն է ներկրվել 2520 գլուխ հոլշտին, շվից և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ: Եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջների բազայի վրա իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքների շնորհիվ «Արզնիի տոհմային ԹՏԽ», «Մուլտի Ագրո», «Վամաքս», «Ագրոհոլդինգ Արմենիա», «Հիմնատավուշ Հիմնադրամ», «Դիլի» և «Էկոֆարմ» ընկերություններում վաճառքի նպատակով իրականացվում է տոհմային երինջների աճեցում: Մի շարք ընկերություններում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 7-8 հազար կգ կաթ, որը 3-4 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը:

16. Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունվել է **«Տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագրին հավանություն տալու մասին»** N 53-24 արձանագրային որոշումը: Ծրագրի իրականացման արդյունքում կաճեցվեն տավարի հոլշտին ու շվից ցեղերի և ոչխարի կորիդել ու սուֆֆոլկ ցեղերի մաքրացեղ կենդանիներ, որոնք կունենան հավաստի նախնիներ և աչքի կընկնեն ցեղին բնորոշ տոհմային և մթերատու հատկանիշներով: Կստեղծվեն մասնագիտացված տոհմաբուծարաններ, որոնք ի վիճակի կլինեն բարձրարժեք տոհմային կենդանիներ վաճառել տավարաբուծությամբ և ոչխարաբուծությամբ զբաղվող այլ տնտեսություններին, ինչի շնորհիվ նախիրներում և հոտերում կբարձրանա ստացվող սերնդի մթերատվության մակարդակը, հանրապետությունում կավելանան տավարի և ոչխարի մսի արտադրության ծավալները:

17. Մշակվել է նաև **«Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը»,** որի իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի տարաժամկետ վճարման պայմանով հանրապետության ֆերմերային տնտեսություններին հատկացնել եվրոպական երկրներից ներկրված կաթնատու և կաթնամսատու ուղղության լավագույն ցեղերի կենդանիներից տեղական վերարտադրության արդյունքում ստացված բարձրարժեք տոհմային կենդանիներ: Արդյունքում, հանրապետության տավարի նախիրները կհամալրվեն բարձր մթերատու տոհմային կենդանիներով: Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում շարունակվում են քննարկումները՝ տնտեսություններին տարաժամկետ վճարման պայմանով տոհմային կենդանիների մատակարարման մեխանիզմների վերաբերյալ: Ծրագրի հիմքում ընկած է տոհմային կենդանիների արժեքի առնվազն 15 %-ի սկզբնական վճարումը տնտեսավարողի կողմից: Ծրագրի քննարկումը ՀՀ կառավարությունում նախատեսված է իրականացնել 2018 թվականի ապրիլ ամսին:

18. **Ձկնաբուծության** համար նախատեսված ջրի խնայողության համակարգի պիլոտային ծրագրի շրջանակներում ՀՀ Արարատի մարզում ավարտվել են շինարարական աշխատանքները և իրականացվում է փորձարկումներ: Ստեղծվել է ձկնաբուծական տնտեսությունների բանկ և ռեգիստր: 2017 թվականին ապրանքային ձկան արտադրության ծավալը կազմել է շուրջ 17.0 հազ. տոննա: Ըստ օպերատիվ տվյալների, հանրապետությունից արտահանվել է շուրջ 3.0 հազ. տոննա ապրանքային ձուկ և 73.6 տոննա ձկան խավիար:

19. **Մեղվաբուծության** ոլորտում համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով մշակվել և ընդունվել է **«Հայաստանի Հանրապետությունում 2017-2020թթ. մեղվաբուծության զարգացման հայեցակարգը»:** 2017 թվականին հանրապետությունից օպերատիվ տվյալներով արտահանվել է շուրջ 38 տոննա մեղր, որն ավելի քան եռակի անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Անասնաբուժության ոլորտ

20. 2017 թվականի ընթացքում հանրապետությունում **«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի»** շրջանակներում «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքած համայնքը սպասարկող անասնաբույժերի միջոցով իրականացվել է խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելոզ, տուբերկուլինիզացիա, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, նոդուլյար մաշկաբորբ, խշխշան պալար հիվանդությունների նկատմամբ՝ 4736.9 հազ. կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում, մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ, սիբիրախտ և դաբաղ հիվանդությունների նկատմամբ՝ 768.6 հազ. կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում և ձիերի սիբիրախտ հիվանդության նկատմամբ՝ 12.7 հազ. կանխարգելիչ միջոցառում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 5518.2 հազ. միջոցառում: Իրականացված միջոցառումների արդյունքում հանրապետությունում պահպանվում է կայուն անասնահամաճարակային իրավիճակ:

Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում

21. Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով շարունակվել է աջակցությունը գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը և գործունեությանը: Մասնավորապես, Գյուղատնտեսության աջակցության մարզային կառույցների աջակցությամբ 2017 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզում ստեղծվել է 2 կոոպերատիվ («Վերնաշեն Միրգ» և «Աղավնաձոր Միրգ»):

22. Մշակվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը գտնվում է քննարկման փուլում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականին, որի նպատակն է պետական ուղղակի աջակցության մեխանիզմների միջոցով հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման խթանումը:

Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում

23. Հաշվետու ժամանակահատվածում **«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի»** շրջանակներում 2011 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է 106.6 մլրդ դրամի 127.7 հազ. միավոր վարկ, սուբսիդավորված գումարը կազմել է 5.4 մլրդ դրամ: Միայն 2017 թվականին ծրագրի առաջին փուլում տրամադրվել է 7.5 մլրդ դրամի 8340 միավոր վարկ, սուբսիդավորված գումարը կազմել է 704.7 մլն դրամ:

24. ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել **Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը**, որն իրականացվում է նոր մեխանիզմներով և պայմաններով՝ սկսած 2017 թվականի 4-րդ եռամսյակից: Վարկերը տրամադրվում են 3-10 մլն դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով՝ ելնելով ներդրումների ուղղվածությունից: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3 %, իսկ մնացած համայնքների համար 5 % տոկոսադրույքով: Վարկի տրամադրման նախապայման է համարվում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Օպերատիվ տվյալներով 2017 թվականի 4-րդ եռամսյակում օպերատիվտվյալներով տրամադրվել է 920 միավոր վարկ 4276.0 մլն դրամ գումարով: Մեկ վարկի միջին չափը կազմել է 4.65 մլն դրամ:

25. Պտուղբանջարեղենի և խաղողի մթերման գործընթացի բարելավման և գյուղացիական տնտեսությունների հետ հումքի գնման պայմանագրերի կնքման գործընթացի բարելավմանն է ուղղված ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 33 արձանագրային որոշմամբ

հավանության արժանացած **Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագիրը**, որից օգտվելու համար գյուղացիական տնտեսությունների հետ կնքված Բերքի գնման պայմանագրի առկայությունը համարվել է վարկավորման նախապայման: Ծրագրի շրջանակներում տարեկան առավելագույնը մինչև 12 % անվանական տոկոսադրույքով տրամադրվող նպատակային վարկերի մինչև 9 տոկոսային կետին համարժեք մասը (գումարը) սուբսիդավորվում է և վարկառուի կողմից վճարվող վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է 3 տոկոս: Ծրագրի շրջանակներում տրամադրվող սուբսիդավորման ենթակա վարկերը բացառապես նպատակաուղղված են մթերվող պտուղբանջարեղենի և խաղողի արժեքի վճարմանը: Պիլոտային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տրամադրել շուրջ 2.4 մլրդ դրամի վարկեր, իսկ յուրաքանչյուր վարկառուին տրամադրվող վարկի առավելագույն չափը կկազմի 150.0 մլն դրամ: 2017 թվականին ծրագրի շրջանակներում տրամադրվել է թվով 19 վարկ 1310.9 մլն դրամ գումարով, կնքվել է բերքի գնման 919 պայմանագիր:

26. Ծրագիրը շարունակվելու է հետագա տարիներին և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է **«Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին և ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ տրամադրվող հաշվետվության ձևին հավանություն տալու մասին»** 2017 թվակլանի դեկտեմբերի 28-ի N 53-12 արձանագրային որոշումը:

27. ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 15 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած **«Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսության վնասների կանխարգելման հայեցակարգի»** շրջանակներում հակակարկտային միջոցառումների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ պայմանավորված մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 37 արձանագրային որոշմամբ ընդունվել է **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը**: Հակակարկտային ցանցերի ներդրման խթանման նպատակով 2018 թվականից սկսած մասնակի կսուբսիդավորվի հակակարկտային ցանցեր ձեռք բերող և ներդրող, վարկային պայմանագիր կնքած տնտեսավարողների վարկի տոկոսադրույքը: Հակակարկտային ցանցերի ներդրման պետական աջակցության (վարկավորման) պայմաններն են. խաղողի այգիների և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի համար՝ վարկերի տրամադրում հայկական դրամով, 7 տարի մարման ժամկետով, վարկի տարեկան մինչև 14 % տոկոսադրույքով, վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկը տնտեսավարողին տրամադրվի 2 % տոկոսադրույքով:

Ծրագիրը հնարավորություն կտա տարեկան սուբսիդավորել 1350 հա խաղողի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրված վարկերի տոկոսադրույքը:

28. ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53-13 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել **«Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը»,** որով նախատեսվում է խթանել բազմամյա տնկարկներում՝ պտղատու և խաղողի այգիներում, բարձրարժեք մշակաբույսերի դաշտերում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման գործընթացը: Այդ նպատակով նախատեսվում է սուբսիդավորել ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը վարկառուներին տրամադրվեն 2 % տոկոսադրույքով:

29. Հավանության է արժանացել նաև **«Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման պիլոտային ծրագիրը»:** Պտղատու այգիների հիմնումը խրախուսելու նպատակով, մինչև 10 հա ինտենսիվ այգու և մինչև 5 հա հատապտղանոցների հիմնման դեպքում վարկերը տրամադրվելու են 5 տարի մարման ժամկետով, մինչև 14 % տոկոսադրույքով, որի 9 տոկոսային կետը կսուբսիդավորվի: Ծրագրի իրականացումը կխթանի նոր ինտենսիվ այգիների հիմնման գործընթացը, շուրջ 200.0 հա-ով կավելանան պտղատու այգետարածքները:

<u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում</u>

30. 2017 թվականին պտուղբանջարեղեն վերամշակող 51 և խաղող վերամշակող 53 ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 180.8 հազ. տոննա պտուղբանջարեղեն և խաղող (23.3 մլրդ դրամի), այդ թվում՝ 44.6 հազ. տոննա բանջարեղեն, որից՝ 24.5 հազ. տոննա լոլիկ, 25.3 հազ. տոննա պտուղ և 110.9 հազ. տոննա խաղող: Խաղողի մթերման 1 կգ-ի միջին գինը կազմել է 131.4 դրամ, նախորդ տարվա 129.7 դրամի դիմաց:

31. Գյուղատնտեսական մթերքների իրացմանը նպաստելու համար 2017 թվականին շարունակվել է մայրաքաղաքում գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպումը:

32. 2017 թվականին օպերատիվ տվյալներով հանրապետությունից արտահանվել է 120851.0 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 19294.0 տոննա խաղող, 58067.0 տոննա պտուղ, որից՝ 28474.0 տոննա ծիրան, 8566.0 տոննա դեղձ, 2562.0 տոննա ելակ, 6583.0 տոննա սալոր, 1181.0 տոննա կեռաս, 37387.0 տոննա բանջարեղեն և 6103.0 տոննա կարտոֆիլ:

<u>Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն</u>

33. **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»** վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում 12 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 41 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 19 անիվավոր տրակտոր, 22 միավոր այլ գյուղգործիքներ:

34. ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N 11 արձանագրային որոշմամբ ընդունվել է **«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը»**: Ծրագիրը մեկնարկել է ապրիլ ամսից: Ծրագրի հիմնական նպատակն է՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը, արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Ծրագիրը հնարավորություն է տալիս գյուղատնտեսությունում տնտեսավարողներին լիզինգի առարկայի ձեռքբերման գնի 20%-ի չափով կանխավճարով, 3-10 տարի մարման ժամկետով (կոմբայնների համար՝ 10 տարի, տրակտորների համար՝ 6, հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար՝ 3–6, այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ 3 տարի), լիզինգի մինչև 9% տոկոսադրույքի 7 տոկոսային կետի սուբսիդավորմամբ ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա:

Ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի ապրիլից: Ըստ օպերատիվ տվյալների, ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական տեխնիկա է տրամադրվել թվով 67 լիզինգառուի (շահառուի), որոնց տրամադրվել է 157 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 67 միավոր տրակտոր, 2 միավոր կոմբայն և 88 միավոր այլ գյուղտեխնիկա:

35. Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը գյուղատնտեսական տեխնիկայի կայանների գործունեության կազմակերպման ու զարգացման միջոցով բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 342-Ն որոշմամբ

նախատեսվել է տրամադրել մինչև 700 մլն դրամ: Այդ նպատակով հաշվետու ժամանակաշրջանում հայտարարվել է առաջարկներ ներկայացնելու գործընթաց: Ստացված առաջարկներից դրական եզրակացություն ստացած առաջարկը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 516-Ն որոշմամբ: **Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնադրման ծրագիրը** հաստատվել է ՀՀ կառավարության մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշմամբ: Ծրագրի հաջորդ փուլի՝ գյուղատնտեսական տեխնիկայի գնման մրցույթի գործընթացի շրջանակներում Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնման նպատակով Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 7 միավոր՝ ՊՀԿՄ-9 մակնիշի 9 խոփանոց գութաններ, ինչպես նաև իրականացված մրցույթի արդյունքում պայմանագիր է կնքվել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հետ՝ 7 միավոր Case «Magnum 310» մակնիշի տրակտորներ հանրապետություն ներկրելու համար:

Խորհրդատվության ոլորտ

36. **«Գյուղական խորհրդատվական ծառայություններ»** ծրագրի շրջանակներում 2017 թվականին տնտեսավարող սուբյեկտներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝ 509 սեմինար և 425 դաշտային ուսուցում, 10965 խորհրդատվական միջոցառում, 82 փորձացուցադրական աշխատանք, 7 սեմինար-դասընթաց (վերապատրաստումներ) գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների խորհրդատուների և այլ շահառուների համար, 65 ռադիոհեռուստահաղորդում, 250 անուն խորհրդատվական թերթիկների և բուկլետների տպագրում՝ 59155 ընդհանուր տպաքանակով, 77 համար թերթի տպագրում՝ 102300 ընդհանուր տպաքանակով:

37. Կառուցվացքային փոփոխությունների արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ 10 մարզերում գործող գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն ՓԲԸ-ների գործառույթները 2017 թվականի ապրիլին փոխանցվեցին նորաստեղծ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին: Հիմնադրամի կողմից ընդունվել է «Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամի գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների մատուցման ուղեցույց» փաստաթուղթը, որն իր մեջ ներառում է ինչպես գյուղատնտեսական խորհրդատվության առաքելությունը և տեսլականը, այնպես էլ դրանց հասնելու համար մեթոդները և մեթոդաբանությունը: Ուղեցույցը մեկ ընդհանուր փաստաթուղթ է, որը ծառայում է խորհրդատվական համակարգի արդյունավետ իրականացման համար: Հիմնադրամի կողմից իրականացվել է 37 ծրագրային խորհրդատվություն, 190 վարկերի հավաստագրման դասընթաց, նկարահանվել է 20 տեսանյութ:

Միջազգային համագործակցություն

38. Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ), Կոդեքս Ալիմենտարիուսի Հանձնաժողովի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), Համաշխարհային բանկի, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE), Խաղողի և գինու միջազգային կազմակերպության (OIV) հետ, որի արդյունքում գործնականորեն իրականացվել են տնտեսության ագրարային հատվածի զարգացմանը նպաստող ծրագրեր:

39. Ակտիվ համագործակցություն է ծավալվել մի շարք երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Արգենտինայի, Լիտվայի, Բրազիլիայի, Հնդկաստանի և այլ երկրների գյուղատնտեսության նախարարությունների հետ:

40. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողով են ներկայացվում համապատասխան տեղեկանքներ, առաջարկություններ, նախարարության համապատասխան

մասնագետները մասնակցել են աշխատանքային խմբերի տեսակոնֆերանսների ձևաչափով անցկացվող նիստերին: Նիստերում քննարկվող իրավական ակտերի նախագծերի, մեթոդական ուղեցույցերի և այլ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

41. Շարունակվում են աշխատանքները գյուղատնտեսության բնագավառում ՀՀ-ԵՄ համագործակցության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, իրականացվում է Եվրոպական հարևանության **«Աջակցություն գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը»** (ENPARD) ծրագիրը, որի նպատակն է աջակցել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, ինչպես նաև գործող կոոպերատիվների բիզնես կարողությունների ընդլայնմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, շուկայավարմանը, ռիսկերի նվազեցման համակարգի ներդրմանը և այլ աշխատանքների իրականացմանը: 2017 թվականին շարունակվել է նաև Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող **Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագիրը:**

<u>Լիցենզավորում</u>

42. Հաշվետու ժամանակաշրջանում լիցենզավորման աշխատանքների շրջանակներում ստացվել են՝

- բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և վաճառք իրականացնելու 51 ծանուցում, որից մեկը մերժվել է,
- բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի բնագավառի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման 8 դիմում, որոնք բավարարվել են,
- թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնելու 12 ծանուցում, որոնք հաշվառվել են ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց ցանկում,
- թորած ալկոհոլային խմիչքների արտադրության բնագավառի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման 7 դիմում, որոնք բավարարվել են,
- խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության բնագավառի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու 9 ծանուցում, որոնք հաշվառվել են ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց ցանկում,
- Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից արտաքին առևտրի ոլորտի ապրանքների միասնական ցանկում ներառված բույսերի պաշտպանության միջոցների (ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 3808) ներմուծման 53 հայտ, տրամադրվել է 53 լիցենզիա,
- անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման հավաստագիր ստանալու 77 հայտ, տրամադրվել է 72 հավաստագիր:

Գանձվել է 328.9 մլն դրամ պետական տուրք:

<u>Անտառային տնտեսություն</u>

43. ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 30-ի N 50-48 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել **«Անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգը, ռազմավարությունը և միջոցառումների ցանկը»:**

44. «2017 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում շաբաթօրյակների միջոցով իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում 17.3 հա և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 17.2 հա տարածքի վրա և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների ագրոտեխնիկական խնամք՝ 15.0 հա տարածքի վրա:

45. «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում

61.9 հա տարածքում և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամք՝ 214 հա տարածքի վրա:

Վարկային ծրագրեր

46. **2016 թվականից սկսած իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը, որի** շրջանակներում 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է առանձին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի գործունեությունն ուղղված էր ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ խնդիրների լուծմանը, արդյունքում՝ նախադրյալներ են ստեղծվել գյուղատնտեսության կայունության համար:

Գյուղատնտեսության ոլորտում որոշակի ձեռքբերումների հետ մեկտեղ առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծմանն է ուղղվելու նախարարության կողմից 2018 թվականին իրականացվող քաղաքականությունը: Դրանք են.

- գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը,
- սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացմանը,
- բնակլիմայական աղետներից (երաշտ, կարկտահարություն և այլն) վնասների կան-խարգելման նախադրյալների ստեղծմանը,
- պտղատու ինտենսիվ այգիների հիմնման խթանմանը,
- գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանման ուղղությամբ միջոցառումների իրականացմանը,
- սուբսիդավորման մեխանիզմների կատարելագործմանը,
- գյուղատնտեսական խորհրդատվական և տեղեկատվական համակարգի բարելավմանը,
- գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրմանը (կաթիլային ոռոգման համակարգեր, հակակարկտային ցանցեր, աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգեր),
- գյուղատնտեսական տեխնիկայի նորացման, սպասարկման և մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրմանը,
- գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման նախադրյալների ստեղծմանը:

Վերը նշված խնդիրների լուծումը նախադրյալներ կստեղծի առաջիկայում գյուղատնտեսության զարգացման և տնտեսական աճի ապահովման համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	31.	«Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի նիստում N 50-48 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգին, ռազմավարությանը և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	32.	«Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումն ընդունվել է 2017 թվականի ապրիլի 13-ի N 15 նիստում: Հայեցակարգի հիմնական նպատակը՝ բնակլիմայական աղետներից գյուղատնտեսության դիմակայության մակարդակի բարձրացման, ոլորտի ռիսկերի մեղմման ու հասցվող վնասների կանխարգելման բնագավառում քաղաքականության հիմնական ուղղությունների կանխորոշումն է: ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի նոյեմբերի 30-ի նիստում N 50-5 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մա-

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
			սին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Հիմնական նպատակը՝ բնակլիմայական աղետներից գյուղատնտեսության դիմակայունության մակարդակի բարձրացման, ոլորտի ռիսկերի մեղմման ու հասցվող վնասների կանխարգելման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 15 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգի» կատարումն ապահովող միջոցառումների համակարգված իրականացումն է: Գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի առկայությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է ստեղծում դրանք կառավարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար: Ծրագրով ներկայացվում են բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման միջոցառումները առաջիկա տարիների համար:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	33.	«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայաց-	ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2017թ. հունիսի 15-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 662-Ն որոշումը: Որոշմամբ սահմանվել են պեստիցիդների և ագրո-

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
		նելը	քիմիկատների վաճառք իրականացնող կազմակերպությունների ստուգման համար պահանջվող ստուգաթերթերը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	34.	«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Մշակվել է «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 18.10.2017թ. N ԻԱ/ԳՂ-1/9424-17 գրությամբ ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի կողմից նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների հիման վրա ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին ուղղված ՀՀ գյուղատնտեսության նախարարի 13.11.2017թ. N ԻԱ/ԳՂ-1/10344-17 գրությամբ առաջարկվել է նախագծի ընդունումը համարել ոչ նպատակահարմար, որը ՀՀ վարչապետի 21.11.2017թ. բN 02/23.14/25520-17 հանձնարարականով ընդունվել է ի գիտություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության	35.	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված ժամկետում ՀՀ կառավարություն չներկայացնելու վերաբերյալ մեկնաբանությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N ԻԱ/ԱՇ/8735-17 և նոյեմբերի 11-ի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
պետական ծառայություն)			N ԻԱ/ԱՇ/10815-17 գրություններով ներկայացվել է ՀՀ կառավարություն, որով տեղեկացվել է, որ Նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը չի կարող իրականացվել սահմանված ժամկետում՝ 2017 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ, քանի որ այն բխում է Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների սննդի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման հայեցակարգից, որը դեռևս հաստատված չէ ՀՀ կառավարության կողմից: Տվյալ միջոցառման համար նոր ժամկետ հնարավոր կլինի սահմանել «Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների սննդի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի հաստատումից հետո:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական	36.	«Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության բնագավառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 30-ի ՀՀ կառավարություն ուղարկված N ԻԱ/ԼԻ-2/10930-17 գրությամբ տեղեկացվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 01/14/4283-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության բնագավառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումնե-

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
ծառայություն)			րի մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի նիստի օրակարգում ներառելու համար:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	37.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 30-ի ՀՀ կառավարություն ուղարկված N ԻԱ/ԼԻ-2/10930-17 գրությամբ տեղեկացվել է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (հանրակրթական ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ստուգման համար պահանջվող ստուգաթերթերը) ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի հոկտեմբերի 21-ի N 01/14/5598-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ստեղծված հանգամանքներից ելնելով, սույն կետի կատարումն սահմանված ժամկետներում ապահովելու համար, միաժամանակ մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 2017 թվականի հոկտեմբերի 20-ին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ տեսչական բարեփոխումների համակարգման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
			խորհրդի մասնագետների հետ համատեղ փորձարկելու համար: ՀՀ կառավարությունից սույն թվականի նոյեմբերի 13-ին ստացված հանձնարարականի համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը անհրաժեշտ է ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը հաստատվելուց հետո:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	38.	«Գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Մշակվել է «Գինեգործական արտադրանքին ներկայացվող պահանջների և թույլատրելի գինեգործական մեթոդների ու մշակումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 17-ի N ԻԱ/ԳՂ-1/9372-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության: Նախագիծը քննարկվել է մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 7-ի նիստում և հանձնարարվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ քննարկել որոշման նախագծի ընդունման նպատակահարմարության հարցը՝ հաշվի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
			առնելով ԵԱՏՄ-ի կողմից ընդունվելիք կանոնակարգերը, հարցին անդրադառնալ 2018 թվականի հունվար ամսվա ավարտից հետո:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	39.	«Հայաստանի Հանրապետությունում բուսասանիտարիայի բնագավառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 30-ի N ԻԱ/ՌՆ-2/10949-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում բուսասանիտարիայի բնագավառում ռիսկերի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի նիստի օրակարգում ներառելու համար:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	40.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N ՌՄ/ԼԻ-2/11353-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել տեսչական բարեփոխումների խմբի հետ փորձարկում անցած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվում է անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնող անձանց համար ստուգաթերթը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսու-	41.	«Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի աուդիտի ստուգաթերթը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ կառավարություն ներկայացած N ԻԱ/ԱՇ/10948-17 գրությամբ տեղեկացվել է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայու-

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
թյան նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)		կառավարության աշխա-տակազմ ներկայացնելը	թյան (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակազմի կողմից մշակվել է «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի» աուդիտի ստուգաթերթի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) և ներկայացվել շահագրգիռ մարմիններ՝ կարծիքի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծառայությունը Նախագծի նախնական քննարկման նպատակով նախաձեռնել էր բազմաթիվ հանդիպումներ սերտիֆիկացնող մարմինների, միջազգային փորձագետների, տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև տեսչական բարեփոխումների խմբի ներկայացուցիչների հետ, գործընթացը կպահանջի հավելյալ ժամանակ՝ ամփոփելու շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները և Նախագիծը սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու համար: 2017 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/42.2/27064-17 հանձնարարականով Նախագիծը շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքները ամփոփումից հետո ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի աշխատանքային կարգով ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N ԻԱ/ԱՇ/11656-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:
ՀՀ գյուղատնտեսության	42.	«Հայաստանի Հանրապետությունում տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման	Մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում 2018–2022 թվականների տոհմաբուծարանների

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
նախարարություն		ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ստեղծման և զարգացման ծրագրին հավանություն - տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը շահագրգիռ գերատեսչությունների, «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված առարկությունների, առաջարկությունների հիման վրա լրամշակված Նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 24-ի N ԻԱ/ԼԻ-1/10747-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ կարծիքի և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 30-ի N ԻԱ/ԼԻ-1/10950-17 գրությամբ՝ ՀՀ կառավարություն: ՀՀ վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 6-ի հանձնարարականի հիման վրա Նախագիծը «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված առարկությունների, առաջարկությունների և ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության հիման վրա լրամշակվել, և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N ԻԱ/ԼԻ-1/11516-17 Նախագծի վերջնական տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 (կետ 24) արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագիրը»:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	31.	Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում	- **Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներգրավում (ցանքատարածությունների ավելացում 3.0-3.5 հազ. հեկտարով),** - Հանրապետությունում նախատեսված 3.0-3.5 հազ. հեկտարով ցանքատարածությունների ավելացում չի արձանագրվել: Վերջինս պայմանավորված է մի շարք գործոններով: Երկարատև և սաստիկ ձմռան, կարճատև գարնան հետևանքով գյուղատնտեսական տարվա էականորեն հետ ընկնելը հանգեցրեց ցանքի ժամկետների կրճատմանը: Այնուհետև սակավաջրության պայմաններում (օդի բարձր ջերմություն և ցածր հարաբերական խոնավություն) ջրազրկվեց հողի վարելաշերտի վերին զանգվածները, որը հնարավորություն չեր տալի ցանքի իրականացման համար, այդ հատկապես ընդգծված էր անջրդի երկրագործության պայմաններում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2017 թվականի հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները կազմել են 290.4 հազ. հա: Ցանքատարածությունների իրական ծավալները հնարավոր կլինի գնահատել տարվա վերջնական արդյունքների ամփոփումից հետո: - **առաջնային սերմնաբուծության զարգացման ծրագրի իրականացում՝ շուրջ 60 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտայի սերմացուի ներկրում, տեղական արտադրողներից 15 տոննա**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			սերմացուի ձեռքբերում և դրա վերարտադրության ապահովում, Հաշվի առնելով այն, որ հանրապետության սերմարտադրող տնտեսավարողների մոտ առկա էր աշնանացան ցորենի բարձր վերարտադրության հավաստագրված սերմերի որոշակի քանակություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տարբեր միջոցներով (ԶԼՄ-ներ, ինտերնետային կայք, հանդիպումներ և այլն) աշխատանքներ է իրականացրել սերմարտադրողների հետ, աջակցել սերմերի իրացման հարցում և տրամադրել անհրաժեշտ խորհրդատվական աջակցություն: Միաժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ՀՀ մարզերին 2012-2014 թվականներին տրամադրված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմերի դիմաց գումարները հողօգտագործողների կողմից չվճարելու պատճառով առաջացել էր ֆինանսական միջոցների անբավարարություն, որի հետևանքով աշնանացան ցորենի սերմարտադրության ծրագիրը հնարավոր չեղավ իրականացնել: Փոխարենը, բարձր վերարտադրության սերմերի արտադրության հիմնավորված՝ փորձարկված սորտերով ծրագրի իրականացման համար ՌԴ-ի «Սեմենա Ստավրոպոլյա» ՓԲԸ-ից, 2017 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված պայմանագրի համաձայն, ներկրվել է աշնանացան ցորենի 15 տոննա առաջին վերարտադրության հինգ սորտի, 3 տոննա

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			էլիտային վերարտադրության մեկ սորտի և աշնանացան գարու 2 տոննա առաջին վերարտադրության մեկ սորտի սերմեր, որոնցով կատարվում են սորտափորձարկումներ ՀՀ տարբեր մարզերում: Վերջինիս արդյունքներից ելնելով՝ կիրականացվի համապատասխան սորտերի սուպերէլիտային վերարտադրության սերմերի ներկրման և վերարտադրության ծրագիր: - **գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի մատչելիության բարձրացում՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով,** Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2011 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է 106.6 մլրդ դրամի 127.7 հազ. միավոր վարկ, սուբսիդավորված գումարը կազմել է 5.4 մլրդ դրամ: Միայն 2017 թվականին ծրագրի առաջին փուլում տրամադրվել է 7.5 մլրդ դրամի 8340 միավոր վարկ, սուբսիդավորված գումարը կազմել է 704.7 մլն դրամ: ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը, որը իրականացվում է նոր մեխանիզմներով և պայմաններով սկսած 2017 թվականի 4-րդ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			եռամսյակից: Եռակողմ հուշագրեր են ստորագրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի և մի շարք ֆինանսական կազմակերպությունների՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի, «ՔԱՐԴ Ագրոկրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի, «ՖԱՐՄ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև: Վերանայվել են վարկերի տրամադրման պայմանները: Վարկերը տրամադրվում են 3-10 մլն դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով՝ ելնելով ներդրումների ուղղվածությունից (ներդրումների կառուցվածքում շրջանառու միջոցների տեսակարար կշիռը 30 %-ից ավելին կազմելու դեպքում վարկավորումը կիրականացվի մինչև 2 տարի ժամկետով, իսկ հիմնական միջոցների 70 % և ավելին կազմելու դեպքում՝ մինչև 5 տարի ժամկետով): Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3 %, իսկ մնացած համայնքների համար 5 % տոկոսադրույքով:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			Վարկի տրամադրման նախապայման է համարվում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Օպերատիվ տվյալներով 2017 թվականի ընթացքում տրամադրվել է 920 միավոր վարկ 4276.0 մլն դրամ գումարով: Մեկ վարկի միջին չափը կազմել է 4.65 մլն դրամ: Ծրագիրը շարունակվում է: Նոր ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի քանակի և գումարի փոքր լինելը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ, փոխվել են վարկավորման մեխանիզմներն ու պայմանները, մասնավորապես՝ վարկավորման գումարի և սուբսիդավորվող տոկոսադրույքի չափի ավելացման հետևանքով նվազել է վարկերի թիվը: Ծրագրով վարկավորման գումարի ավելացումը փոխել է վարկունակության պահանջները: Բացի այդ՝ նոր ծրագրով ֆինանսական կառույցների կողմից վարկավորման հայտերի ընդունման, քննարկման և վարկերի տրամադրման համար պարտադիր պայման է ուսուցման արդյունքում հավաստագրի տրամադրումը, հետևաբար այդ գործընթացը հիմնավորված ձևով երկարացնում է վարկավորման գործընթացը: Նոր ծրագիրն ընդունվեց ընթացիկ տարվա սեպտեմբերի 14-ին, հետևաբար մեկ եռամսյակի տևողությունը բավարար չեր ծրագրի ամբողջական իրականացման համար: **-«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			շրջանակներում հիմնադրված «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին աջակցություն՝ գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների տրամադրում (կտրամադրվի 100 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 25 միավոր տրակտոր), կոոպերատիվների անդամ տնտեսություններում կաթի արտադրության ծավալների խթանման և որակական հատկանիշների բարելավման համար կոոպերատիվներին հավաքման սառնարանային կետերի ու վերամշակման արտադրամասերի կառուցման աջակցություն, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ - 32 համայնքի «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլանները հաստատվել են Համաշխարհային բանկի կողմից, - 10 համայնքում ավարտվել են արոտների ջրարբիացման շինարարական աշխատանքները (51 կմ ջրագիծ, 23 հատ խմոց), - 8 համայնքում իրականացվում են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (21 կմ ջրագիծ, 23 հատ խմոց), - 22 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			են մրցույթային փուլում, - 32 համայնքում ընթանում են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի նախագծման նախապատրաստման աշխատանքները: - 12 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 41 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 19 անիվավոր տրակտոր, 22 միավոր այլ գյուղգործիքներ: ՀԳՌԿՄ երկրորդ ծրագրի շրջանակներում հիմնադրված «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների աջակցության համար 2017 թվականին նախատեսված էր տրամադրել 100 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որի ձեռք բերման համար հայտարարված են եղել մրցույթներ՝ ընդ որում շուրջ 50 միավոր գյուղտեխնիկա նախատեսված էր ձեռք բերել 4-րդ եռամսյակում: Սակայն հայտարարված մրցույթների մի մասը չի կայացել ոչ բավարար հայտեր ներկայացնելու հետևանքով: Առ 2017 թվականի հոկտեմբերի 1-ը «ԳԾԻԳ» ՊՀ-ի կողմից ձեռք է բերվել 41 միավոր գյուղտեխնիկա, ևս 14 միավոր գյուղտեխնիկայի ձեռք բերման համար հայտարարված են եղել մրցույթներ, որի արդյունքում կնքվել է պայմանգիր 10 միավոր գյուղտեխնիկայի վերաբերյալ: «ԳԾԻԳ» ՊՀ-ի լուծարման հետևանքով գյուղտեխնիկայի ձեռքբերման համար հայտարարված մրցույթները

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կասեցվեցին և հնարավոր դարձավ հայտարարել կրկին միայն 2017 նոյեմբերի 29-ից ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կենտրոն» ՊՀ-ի կողմից (2017 թվականի հոկտեմբերի 11-ից սկսվել է «ԳԾԻԳ» ՊՀ-ի լուծարման գործընթացը՝ հիմք ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 243-Ա որոշումը): - ՀՀ 4 մարզի 18 համայնքի ղեկավարների, արոտօգտագործողների կոոպերատիվների նախագահների, հաշվապահների, վեճերը լուծող անձանց համար (ընդամենը՝ 72 մարդ) իրականացվել է ուսուցում՝ կապված արոտօգտագործման, կոոպերատիվի բյուջեի կազման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների մանրամասն ներկայացման, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման և դեգրադացիայի դեմ պայքարի ու արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով: Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ համայնքների և կոոպերատիվների ներկայացուցիչների հետ և իրազեկվել է, որ կաթի հավաքման և վերամշակման, ինչպես նաև սպանդանոցների հիմնման համար հիմնավորված առաջարկությունների ներկայացման դեպքում դրանք կքննարկվեն: - **ՀՀ գյուղատնտեսության նախարարության**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			խորհրդատվական համակարգի միջոցով գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման միջոցառումների իրականացում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի Վայոց ձորի մարզային կառույցի կողմից սույն թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում իրականացված «Կոոպերատիվների էությունը և առանձնահատկությունները, դրանց կառավարումը: Կոոպերատիվների դերն ու նշանակությունը» թվով 3 դասընթացները նպաստել են համապատասխանաբար 12 և 16 անդամներից բաղկացած «Վերնաշեն Միրգ» և «Աղավնաձոր Միրգ» անուններով գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը: **- բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում, արդյունքում մկնանման կրծողների պատճառած վնասի նվազեցում 70-85 %-ով,** «Բույսերի պաշտպանության ծառայություններ» ծրագրի բյուջեն 2017 թվականին կազմել է 106.6 մլն դրամ, որով շուրջ 162500 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա մկնանման կրծողների դեմ համայնքների միջոցով պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 13 տոննա «Ռոդիֆակում Ս» մկնասպան միջոց: 2017 թվականի գարնանը և աշնանը, հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			համայնքների հողօգտագործողների միջոցով, մկնանման կրծողների դեմ պայքար է իրականացվել շուրջ 113.5 հազ. հեկտար վարելահողերում և բազմամյա տնկարկներում, որի համար մարզերին անհատույց հատկացվել է 9078.5 կգ «Ռոդիֆակում Ս» մկնասպան միջոց: ՀՀ Արարատի մարզի՝ Երասխ, Նարեկ, Պարույր Սևակ, Քաղցրաշեն, Սուրենավան, ՀՀ Վայոց ձորի մարզի՝ Ջերմուկ, Գնդեվազ համայնքներին և «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ին անհատույց հատկացվել է 188 լիտր «Ցիպեր Մաքսի» միջատասպան միջոց, որով համայնքների միջոցով պայքար է իրականացվել մորեխներով վարակված շուրջ 1250 հա վարելահողերի վրա: Իրականացված միջոցառումների արդյունքում հանրապետությունում բուսասանիտարական վիճակը եղել է կայուն: - **հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, արդյունքում 170 համայնքի համար կմշակվեն ագրոքիմիական քարտեզներ և կներկայացվեն պարարտացման հիմնավորված նորմաներ,** Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի» շրջանակներում աշխատանքները սկսել են ապրիլ ամսից: 2017 թվականի ընթացքում հետազոտվել է 157 համայնքի գյուղատնտե-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			սական նշանակության 88287 հեկտար հողեր: Հետազոտվող տարածքից վերցված 29429 հողանմուշում կատարվել է 74455 փորձաքննություն: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել է 165 ագրոքիմիական քարտեզ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: Աշխատանքները շարունակվում են: Ծրագիրը հնարավորություն է տալիս 5 տարվա ընթացքում հանրապետության բոլոր համայնքների հողերը ենթարկել ագրոքիմիական հետազոտման, կազմել խոշոր մասշտաբի ագրոքիմիական քարտեզներ (բույսերի սննդառության համար կարևոր սննդատարրերով ապահովվածության մասին), մշակել պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք տրամադրվում են համապատասխան համայնքներին: - **հակաանասնահամաճարակային կայուն իրավիճակի պահպանմանն ուղղված շուրջ 6.0 մլն կանխարգելիչ պատվաստումների և ախտորոշիչ միջոցառումների իրականացում,** 2017 թվականին «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի իրականացման համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ձեռք են բերվել հետևյալ պատվաստանյութերը՝ հակադաբաղային՝ 2554600 դոզա, հակասիբիրախտային՝ 1297240 դոզա, խշխշան պալար հիվանդության նկատմամբ՝

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			670100 դոզա, նոդուլյար մաշկաբորբի նկատմամբ՝ 2600000 դոզա, Ռոզ-Բենգալ ախտորոշիչ՝ 914960 դոզա, տուբերկուլին՝ 22000 դոզա, լեյկոզ՝ 5000 դոզա, մեղուների վարրոատոզի նկատմամբ բիվարոլ՝ 239500 դոզա, ախտահանիչներ՝ կաուստիկ սոդա՝ 2000 կգ, քլորակիր՝ 1500 կգ, ֆորմալին՝ 1000 կգ, սպիտակ շիբ՝ 400 կգ, կապույտ շիբ՝ 100 կգ: 2017 թվականի ընթացքում հանրապետությունում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի» շրջանակներում «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքած համայնքը սպասարկող անասնաբույժերի միջոցով իրականացվել են խ.ե.կ. բրուցելոզ, տուբերկուլինիզացիա, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, նոդուլյար մաշկաբորբ խշխշան պալար 4736860 հատ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում, մ.ե.կ. բրուցելոզ, սիբիրախտ և դաբաղ 768644 հատ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառում, և ձիերի սիբիրախտ՝ 12743 հատ կանխարգելիչ միջոցառումներ: Ընդամենը՝ 5518247 միջոցառում: Իրականացված միջոցառումների արդյունքում հանրապետությունում պահպանվում է կայուն անասնահամաճարակային իրավիճակ: - **գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակ-**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ցության ծրագրի իրականացում՝ մինչև 2.8 մլրդ դրամ արժեքով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարում, Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի նիստում ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը: Ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է, արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Ծրագիրը մեկնարկել է ապրիլ ամսից: Ստորագրվել են եռակողմ հուշագրեր ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի և մի շարք ֆինանսական կազմակերպությունների՝ «ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի, «ԱԳԲԱ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ԼԻԶԻՆԳ ՎԿ» ՓԲԸ-Ի, «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի միջև: Գյուղատնտեսությունում տնտեսավարողների շրջանում ծրագիրը լայնորեն լուսաբանվել է ինչպես ՀՀ գյուղատնտեսության նախարարության մարզային կառույցների, այնպես էլ ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի կողմից, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքում տեղադրված է տեղեկատվություն՝ լիզինգի տրամադրման պայմանների, լիզինգային ընկերությունների և գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարների վերաբերյալ: Գրություններ են ուղարկվել ՀՀ բոլոր մարզպետներին՝ ակնկալելով նրանց աջակցությունը համայնքներում վերոհիշյալ որոշման լուսաբանման և գյուղական բնակչությանը լիզինգի ձևակերպման մեխանիզմների պարզաբանման հարցում: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը Հայաստանի Հանրապետություն իրականացվում է մասնագիտացված կառույցների կողմից, որոնք կիրականացնեն նաև գյուղատնտեսական տեխնիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկում: Համաձայն ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված հաշվետվության, ծրագրի շրջանակներում սկսած 2017 թվականի ապրիլի 1-ից՝ նոյեմբերի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			30-ի դրությամբ գյուղատնտեսական տեխնիկա է տրամադրվել թվով 63 լիզինգառուի (շահառուի), որոնց տրամադրվել է 150 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 62 միավոր տրակտոր, 2 միավոր կոմբայն և 86 միավոր այլ գյուղտեխնիկա: Ըստ օպերատիվ տվյալների, ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացքում գյուղատնտեսական տեխնիկա է տրամադրվել թվով 67 լիզինգառուի (շահառուի), որոնց տրամադրվել է 165 միավոր ավելի քան 1.0 մլրդ դրամ արժեքով գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 67 միավոր տրակտոր, 2 միավոր կոմբայն և 96 միավոր այլ գյուղտեխնիկա: Ծրագրով նախանշված ցուցանիշի ոչ ամբողջական ապահովումը պայմանավորված է մի շարք գործոններով, նախ ծրագիրը մեկնարկել է երկրորդ եռամսյակից (իսկ ծրագրով ցուցանիշը սահմանված է մեկ տարվա համար): Գործնականում ծրագիրը մեկնարկել է երբ գարնան մեքենայացված աշխատանքները հիմնականում ավարտված էին, որը էականորեն անդրադարձավ սկզբնական պահանջարկի վրա: Ծրագրով ցուցանիշը սահմանվել է տարեկան կտրվածքով հանրապետության գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի շուրջ 2 տոկոս նորացման նկատառումներից ելնելով, որը մեքենայական հավաքակազմի ներկայիս մաշվածության և տարիքային կազմի պայմաններում բավականին ցածր ցուցանիշ է, հաշվի առնելով նաև այն, որ գյուղատնտեսական տեխ-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			նիկական հավաքակազմի արդյունավետ գործունեությունը ապահովվում է տարեկան 10-12 տոկոս նորացման պայմաններում: Ծրագրի ցուցանիշների վրա իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողների դեռևս ցածր վճարունակությունը (աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում կազմում է 30.4 տոկոս): -**գյուղատնտեսական տեխնիկայի կայանների հիմնման պիլոտային ծրագրի մեկնարկ** Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը գյուղատնտեսական տեխնիկայի կայանների գործունեության կազմակերպման ու զարգացման միջոցով բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 342-Ն որոշմամբ գյուղատնտեսական տեխնիկայի կայանների գործունեության կազմակերպման ու զարգացման նպատակով պետության կողմից նախատեսվել է տրամադրել մինչև 700 մլն դրամ: Այդ նպատակով հաշվետու ժամանակաշրջանում հայտարարվել է առաջարկներ ներկայացնելու գործընթաց: Ստացված առաջարկներից դրական եզրակացություն ստացած առաջարկը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 516-Ն որոշմամբ: Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնադրման ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշմամբ: Ծրագրի հաջորդ փուլի՝ գյուղատնտեսական տեխնիկայի գնման մրցույթի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			գործընթացի շրջանակներում Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնման նպատակով Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 7 միավոր՝ ՊՇԿՄ-9 մակնիշի 9 խոփանոց գութաններ, ինչպես նաև իրականացված մրցույթի արդյունքում պայմանագիր է կնքվել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հետ՝ 7 միավոր Case «Magnum 310» մակնիշի տրակտորներ հանրապետություն ներկրելու համար: - **աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրման պիլոտային ծրագրի մեկնարկ**, Ստորագրվել է Ծրագրի համաձայնագիրը և ներկայումս այն գտնվում է փաստաթղթերի վերջնականացման փուլում: Ծրագրի ներդրումը կազմում է 1.8 մլն ԱՄՆ դոլար: Նպատակն է իրականացնել հանրապետության հողերի լիարժեք քարտեզագրում՝ առկա հողատեսքերի, դրանց վիճակի, տեղի ունեցող աշխարհագրական գործընթացների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում ունենալու համար: Քարտեզագրումն աշխարհատեղեկատվական թվայնացված համակարգի (ԱԹՀ) հիմնական գործառույթն է, որի միջոցով վիզուալ ներկայացվում են առկա տվյալները: ԱԹՀ միջոցով ստացված տվյալները պահպանվում են տվյալների բազայում, այնուհետև վերածվում քարտեզի ֆորմատի: - **արտահանմանը միտված ժամանակակից ձկնաբուծարանների ձևավորման և կայացման պետական աջակցությամբ մեխանիզմների**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ներդրմամբ ռազմավարության նախագծի մշակման համար ոլորտի ուսումնասիրություն, ստացված տվյալների վերլուծություն Համաձայն ՀՀ մարզպետարաններից ստացված օպերատիվ տվյալների՝ 2017 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ, հանրապետությունում գործում է շուրջ 180 ձկնաբուծական տնտեսություն, որից շուրջ 153-ը Արարատյան հարթավայրում, իսկ մնացած 27-ը՝ հանրապետության այլ մարզերում: Միաժամանակ ստացված տեղեկատվության համաձայն, ստեղծվել է ձկնաբուծության ռեեստր և օպերատիվ հաշվարկվել արտադրական ծավալները: Բացի այդ՝ աշխատանքային տարբերակով հարցումներ են իրականացվել որոշ ձկնաբուծարաններում՝ ճշգրտելով դրանց ձկան արտադրության ծավալները և հզորությունները: Հայաստանի Հանրապետություն ներմուծված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից արտահանված բեղմնավորված ձկնկիթի, ձկան կերի, ձկան, ձկնամթերքի վերաբերյալ ստացված տվյալները վերլուծելով, պարզվում է, որ 2017 թվականի ընթացքում արտահանվել է մեծ քանակի ձուկ և ձկնամթերք: Արտահանմանը միտված և դրանց խնդիրների լուծման նպատակով «Սևանի Իշխան» ՓԲԸ-ից ներկայացվել է առաջարկություններ ռազմավարությունում ներառելու նպատակով: Ուսումնասիրվում են ավստրալիական խեցգետնի և

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կակղամորթի բուծման հնարավորությունները, քանի որ արդեն իսկ քայլեր են ձեռնարկվում դրանց բուծումը հանրապետությունում իրականացնելու նպատակով: Ձկնաբուծության համար նախատեսված ջրի խնայողության համակարգի պիլոտային ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները: Նախատեսվում է իրականացնել վերլուծություններ և ստացված արդյունքները ներառել ռազմավարության նախագծում: Իրականացվում է համագործակցություն ԵԱՏՄ-ի ակվակուլտուրայի հանձնաժողովի հետ՝ արտահանմանը միտված ռազմավարության նախագծեր ուսումնասիրելու նպատակով: Քայլեր են ձեռնարկվում համագործակցելու «Եվրոֆիշ» միջազգային կազմակերպության հետ, միջազգային փորձը տեղայնացնելու նպատակով:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	32.	Գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գներով մատակարարում	– **«Պետական աջակցության գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման գործընթացը կանոնակարգելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում,** ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի փետրվարի 15-ի N 40-Ա հրամանով հաստատվել է «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագիրը: – **«Պետական աջակցության**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի մշակում, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի ապրիլի 12-ի N 102-Ա հրամանով հաստատվել է «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման» ծրագիրը: –**գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ շուրջ 32 հազ. տոննա ազոտական, 3,0 հազ. տոննա ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, շուրջ 5.0 մլն լիտր դիզելային վառելանյութի մատակարարման ծրագրերի իրականացում:** Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի հողօգտագործողների վճարունակ պահանջարկի հիման վրա նախատեսված էր հատկացնել 34882 տոննա ազոտական (2944.1 տոննա 2016 թվականի մնացորդ) 983 տոննա ֆոսֆորական (504.2 տոննա 2016 թվականի մնացորդ) և 903 տոննա կալիումական (559.4 տոննա 2016 թվականի մնացորդ) պարարտանյութեր: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 878.1 մլն դրամ, որից ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պայմանագրային հիմունքներով,

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			որպես սուբսիդիա, «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ընկերություններին նախատեսել է հատկացնել 673.3 մլն դրամ որպես սուբսիդիա և 204.8 մլն դրամ՝ դրամաշնորհ, համայքներ տեղափոխման և բեռնաթափման համար: Հողօգտագործողներին 50 կգ քաշով 1 պարկ ազոտա-կան պարարտանյութը տրամադրվել է 6000 դրամ, իսկ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութը՝ 7000 դրամ արժեքով: 2017 թվականի ընթացքում հողօգտագործողներին բաշխվել է շուրջ 28.489 հազ. տոննա ազոտական, 504.25 տոննա ֆոսֆորական, 903.05 տոննա կալիումական պարարտանյութ: Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրի շրջանակներում պայմանագրային հիմունքներով, որպես սուբսիդիա, մատակարարին 1 լիտր դիզելային վառելիքի դիմաց տրամադրվել է 34.3 դրամ՝ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխան մինչև 5 մլն լիտր դիզելային վառելիքի՝ 1 լիտրը 280 դրամ արժեքով հողօգտագործողներին վաճառելու համար: 2017 թվականի ընթացքում հողօգտագործողներին տրամադրվել է 3.071 մլն լիտր: Պետք է հաշվի առնել

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			այն հանգամանքը, որ դիզելային վառելիքի բաշխումը կատարվել է ապրիլ ամսից սկսած, երբ ներքին գոտիներում գարնանացանի աշխատանքները ավարտվել էին 70-80%-ով, իսկ շուրջ 1.929 հազ. լիտր մնացորդային քանակութան համար պահանջարկի նոր հայտեր մարզերից չեն ներկայացվել:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	33.	Սերմնաբուծությամբ մասնագիտացված տնտեսությունների միջոցով գյուղացիական տնտեսություններին վերարտադրված որակյալ սերմերի մրցակցային գներով մատակարարում	– **Հանրապետությունում պահանջվող սերմացուի քանակի ճշգրտում,** Համաձայն ՀՀ մարզերից 2017 թվականին ստացված օպերատիվ տվյալների՝ աշնանացան ցորենի սերմացուի պահանջարկը կազմել է՝ 1-ին վերարտադրության՝ 2211 տոննա, էլիտայի՝ 106.5 տոննա, սուպերէլիտայի՝ 108 տոննա, գարու՝ 18.5 տոննա: – **արտերկրից 1000-1500 տոննա գարնանացան գարու, մինչև 50 տոննա եգիպտացորենի, շուրջ 50 տոննա հնդկացորենի, 500-600 տոննա կորնգանի բարձր վերարտադրության սերմերի ձեռքբերում,** ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման 2017 թվականի ծրագիրը հաստատելու և ֆինանսական միջոցների օգտագործումը թույլատրելու մասին» N 216-Ն որոշման համաձայն ՌԴ-ից ներկրվել է 200 տոննա գարնանացան ցորենի, 13

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			տոննա ինդկացորենի, 7 տոննա ոլոռի, 5 տոննա սիսեռի, 1000 տոննա գարնանացան գարու, 5 տոննա եգիպտացորենի, 10 տոննա առվույտի և 240 տոննա կորնգանի սերմ, իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից գնվել է 230 տոննա գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: 2017 թվականի ընթացքում հողօգտագործողներին բաշխվել է շուրջ 89.1 տոննա գարնանացան ցորենի, 1.78 տոննա ինդկացորենի, 7.0 տոննա ոլոռի, 3.45 տոննա սիսեռի, 670.2 տոննա գարնանացան գարու, 2.4 տոննա եգիպտացորենի, 5.1 տոննա առվույտի և 64.0 տոննա կորնգանի սերմացու: Մնացած խմբաքանակը պահեստավորված է և նախատեսվում է 2018 թվականի գարնանը տրամադրել հանրապետության հողօգտագործողներին: – **հանրապետության սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող մասնագիտացված ընկերություններին բարձր վերարտադրությամբ սերմերի հատկացում մարզերի (համայնքների) կողմից, ինչպես նաև պահուստային ֆոնդի ձևավորման պահանջարկի հիման վրա,** ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1001-Ն որոշման համաձայն Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 40 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացուն, ամբողջությամբ տրամադրվել է ՀՀ 4 մարզի 14 շահառուի, որոնք 2016 թվա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կանի աշնանը 1:2 փոխհարաբերությամբ վերադարձրել են 80 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու: Համաձայն ՀՀ մարզերից ստացված գրությունների՝ նշված 80 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացուն ըստ գոտիականության՝ տրամադրվել է 7 և ավելի հեկտար հողատարածք ունեցող սերմնաբուծությամբ զբաղվող 5 մարզի 32 շահառուի՝ 242.34 հեկտար ցանք կատարելու համար՝ 2017 թվականի բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ 160 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու վերադարձնելու պայմանով: – **տրամադրված սերմերի հետվերադարձի ապահովում** 2016 թվականին ՀՀ մարզերի 32 շահառուի տրամադրված աշնանացան ցորենի 80 տոննա էլիտային վերարտադրության սերմերի դիմաց 1:2 փոխհարաբերությամբ 160 տոննա առաջին վերարտադրության սերմերի հետ վերադարձն ընթացքի մեջ է: – **ՀՀ մարզերի հողօգտագործողներին վճարունակ պահանջարկի հիման վրա աշնանացան ցորենի սերմանյութի տրամադրում,** 2017 թվականի համար աշնանացան ցորենի ծրագիր չի իրականացվել: Ծրագիրը չի իրականացվել նախորդ ծրագրով սերմերի դիմաց գումարների ոչ ամբողջական հավաքագրման

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			պատճառով, ինչպես նաև առավել հիմնավորված սորտեր ներկրելու նպատակով ներկայումս աշնանացան ցորենի 6 սորտերի համար իրականացվում է սորտափորձարկում, որի արդյունքներից ելնելով 2018 թվականի աշնանացանի համար կներկրվի տեղի պայմաններին ավելի հարմարվող աշնանացան ցորենի բարձր վերարտադրության սերմացու: **- սերմնապահովման սելեկցիոն կայանների կարողությունների ամրապնդման և դրանց ցանցի ընդլայնման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում:** ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի N ՌՄ/ՌՆ-1/11255-17 գրությամբ «Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ծրագրով նախատեսվում է տեղական և արտերկրի սերմ արտադրող կազմակերպություններից ներկրել 60 տոննա աշնանացան ցորենի, ինչպես նաև հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի 5-ական տոննա էլիտային սերմնանյութ և տրամադրել առաջնային սերմնաբուծությամբ զբաղվող կազմակերպություններին ու սերմնաբուծական ֆերմերային տնտեսություններին 1:2 հարաբերակցությամբ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			վերադարձման պայմանով՝ Հանրապետությունում տեղական արտադրության բարձրորակ սերմնանյութի արտադրական ծավալների ավելացման նպատակով: Ծրագրի մշակման շրջանակներում ուսումնասիրվել են սերմնաբուծական-սելեկցիոն և ֆերմերային տնտեսությունների գիտական ու արտադրական ներուժը, տեղական արտադրության սերմնանյութի արտադրական ծավալների ավելացման և սերմնաբուծական շարունակական ցանցի ստեղծման հնարավարությունները:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	34.	Պտղի և խաղողի պատվաստված տնկանյութի արտադրությամբ զբաղվող գենոֆոնդի պահպանության և ինտենսիվ այգեգործության սելեկցիայի զարգացման գիտաարտադրական կենտրոնի ստեղծում	– **Ստեղծված գիտաարտադրական կենտրոնի ծիրանենու և խաղողի գենոֆոնդի պահպանության կոլեկցիոն այգիներին պետականորեն պահպանվող հատուկ տարածքների կարգավիճակի տրամադրում,** ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի 723–Ա որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության՝ ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքում գտնվող՝ 8.0 հեկտար գյուղատնտեսական նշանակության պետական սեփականություն հանդիսացող հողամասը հետ է վերցվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից և 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրվել «Ագրոինտեքս» ՍՊԸ-ին, որը պարտավորվել է արտադրել տարեկան շուրջ 70 հազ. կլոնային պատվաստակալների վրա պատվաստված

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ցածրաճ ինտենսիվ տնկիներ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տարածքում հիմնված 5 հեկտար ծիրանենու կոլեկցիոն այգուց 1 հեկտարը ծառայում է ծիրանի կենդանի գենոֆոնդի պահպանությանը, իսկ մնացած 4 հեկտարը՝ սելեկցիոն նպատակներով: – **արտերկրից խաղողի ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների կտրոնների ձեռքբերում՝ մինչև 2 հեկտար մայրուտային տնկարան հիմնելու համար,** ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանում և կայուն օգտագործում» (TCP/ARM/3503) ծրագրի շրջանակներում 2017 թվականի ապրիլին արտերկրից հանրապետություն է ներմուծվել խաղողի ֆիլոքսերադիմացկուն 6 սորտերի պատվաստակալների 14500 կտրոն: - **խաղողի ֆիլոքսերադիմացկուն մայրուտի հիմնում մինչև 2 հեկտար տարածության վրա,** Ներմուծված կտրոններով կիլչեցումից հետո, «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում հիմնվել է 2 հա ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների մայրուտ և 0.1 հա տնկարան: – **պտղատեսակների շուրջ 50 հեկտար ինտենսիվ այգիների հիմնման նպատակով ցածրաճ, բարձրարժեք տնկանյութի արտադրության նախա-**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			պատրաստման աշխատանքների իրականացում: ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի 723–Ա որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության՝ ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքում գտնվող՝ 8.0 հեկտար գյուղատնտեսական նշանակության պետական սեփականություն հանդիսացող հողամասը հետ է վերցվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից և 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրվել է «Ագրոինտեքս» ՍՊԸ-ին, որը արտադրելու է կլոնային պատվաստակալների վրա պատվաստված ցածրաճ տնկիներ ինտենսիվ այգիների համար: ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի 1470–Ա որոշմամբ սահմանվել է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքում գտնվող՝ շուրջ 15 հեկտար գյուղատնտեսական նշանակության պետական սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հանձնել «Նորատունկ» ՓԲԸ-ին, վերջինս պարտավորվում է 2018-2019 թվականների ընթացքում նշված հողատարածքի վրա ձևավորել ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ցուցադրական տնկարան, և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2-րդ տարվանից սկսած՝ արտադրել կորիզավոր, հնդավոր և այլ պտղատեսակների բարձրորակ, ժամանակակից ինտենսիվ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			այգեգործության պահանջներին համապատասխան տնկիներ և արմատակալներ՝ տարեկան շուրջ 100 հազար հատ: Նշված ընկերությունների կողմից արտադրված տնկիները և արմատակալները բավարար են 50 հեկտար ինտենսիվ այգիների հիմնման համար:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	35.	Գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում	– **Հանրապետությունում տոհմային կենդանիների պահանջարկի ուսումնասիրություն** Եվրոպական երկրներից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և տարաժամկետ վճարման պայմանով տոհմային երինջներ ցանկացող տնտեսավարողների կողմից 2014-2016 թվականներին ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացված դիմում-հայտերի ուսումնասիրությունները և հաշվառումները ավարտվել են (60 դիմում-հայտ): Նշված կենդանիների նկատմամբ պահանջարկն, ընդհանուր առմամբ, կազմել է 1036 գլուխ, որից 354 գլուխ հոլշտին, 265 գլուխ սիմենթալ և 417 գլուխ շվից ցեղերի կենդանիներ: – **Եվրոպական երկրներից ՀՀ ներկրված տոհմային բարձրարժեք կենդանիների բուծմամբ զբաղվող տնտեսությունների՝ հանրապետության այլ տնտեսություններին տոհմային մատղաշ մատակարարելու հնարավորությունների գնահատում** Հայաստանի Հանրապետության 2017–2022 թթ.-ին տավարաբուծության զարգացման ծրագրի մշակումն ապահովելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի 2017 թվականի փետրվարի 3-ի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			N ԱՀ/ԼԻ-1/699-17 գրությամբ առաջատար տավարաբուծական տնտեսություններին, մասնավորապես՝ ՀՀ Սյունիքի մարզի «Վամաքս», ՀՀ Կոտայքի մարզի «Սոս Սիմոնյան», «Մուլտի Ագրո», «Արզնի ԹՏԽ», ՀՀ Լոռու մարզի «Ագրոհոլդինգ Արմենիա», ՀՀ Տավուշի «Հիմնատավուշ Հիմնադրամ», «Դիլի», ՀՀ Վայոց ձորի մարզի «Էկոֆարմ» ընկերություններին ուղարկվել են գրություններ 2007-2015թթ. տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում եվրոպական երկրներից ՀՀ ներկրված բարձրարժեք տոհմային կենդանիներից ստացված տեղական վերարտադրության տոհմային երինջներ այլ տավարաբուծական տնտեսություններին մատակարարելու կարողությունների և հզորության վերաբերյալ: «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ն իրացնել տնտեսությունում աճեցված մինչև 255 գլուխ տոհմային երինջներ, որից շվից ցեղի՝ 30 գլուխ, սիմենթալ ցեղի՝ 25 գլուխ, հոլշտին ցեղի՝ 200 գլուխ, իսկ «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի տեղեկացմամբ տնտեսությունն ունի 60 գլուխ ֆլեկվի և հոլշտին ցեղերի վաճառքի ենթակա բարձր մթերատու տոհմային երինջներ: – **լիազոր մարմնի կողմից տոհմային տնտեսության կարգավիճակ շնորհելու գործընթացի կանոնակարգում** ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			մայիսի 2-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 116-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Հայաստանի Հանրապետությունում տոհմային անասնաբուծության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների կատարումն ուսումնասիրելու և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ նախապատրաստելու նպատակով: Մշակվել և ներկայումս քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետությունում տնտեսություններին տոհմային կարգավիճակ շնորհելու կարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանի նախագիծը, որտեղ «Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան սահմանվում են ՀՀ տոհմային տնտեսություններին ներկայացվող չափորոշիչները: Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում 2018–2022 թվականների տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը: ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 (կետ 24) արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագիրը»: Ծրագրի իրականացման արդյունքում կաճեցվեն տավարի հոլշտին ու շվից ցեղերի և ոչխարի կորիդել ու

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			սուֆֆոլկ ցեղերի մաքրացեղ կենդանիներ, որոնք կունենան հավաստի նախնիներ և աչքի կընկնեն ցեղին բնորոշ տոհմային և մթերատու հատկանիշներով: Կստեղծվեն մասնագիտացված տոհմաբուծարաններ, որոնք կկարողանան բարձրարժեք տոհմային կենդանիներ վաճառել տավարաբուծությամբ և ոչխարաբուծությամբ զբաղվող այլ տնտեսություններին, ինչի շնորհիվ նախիրներում և հոտերում կբարձրանա ստացվող սերնդի կաթնային և մսային մթերատվության մակարդակը, հանրապետությունում կավելանան տավարի և ոչխարի մսի արտադրության ծավալները: – **տոհմային մատղաշի մատակարարման մեխանիզմների մշակում և գործընթացի կազմակերպում:** Մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը», որը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի N ԻԱ/ԼԻ-1/10161-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ծրագրի իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի տարաժամկետ վճարման պայմանով հանրապետության ֆերմերային տնտեսություններին հատկացնել եվրոպական երկրներից ներկրված կաթնատու և կաթնամսատու ուղղության լավագույն ցեղերի կենդանիներից տեղական վերարտադրության արդյունքում ստացված բարձրարժեք տոհմային կենդանիներ: Արդյունքում, հանրապետության տավարի նախիրները

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կհամալրվեն բարձր մթերատու տոհմային կենդանիներով: Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում շարունակվում են քննարկումները՝ տնտեսություններին տարաժամկետ վճարման պայմանով տոհմային կենդանիների մատակարարման մեխանիզմների վերաբերյալ: Ծրագրի հիմքում ընկած է տոհմային կենդանիների արժեքի առնվազն 15 %-ի սկզբնական վճարումը տնտեսավարողի կողմից: Ծրագիրը 2017 թվականի դեկտեմբերի 14-ին քննարկվել է մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում և առաջարկվել է որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը: Ծրագրով նախատեսվում է մշակել շահառուների ընտրության և ձեռք բերված տոհմային երինջների բաշխման կարգ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի ապահովման նպատակով ստեղծված գանձապետական հատուկ հաշվի գումարները, որում կուտակվում են Եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջների վաճառքից հավաքագրված ֆինանսական միջոցները, բավարար չեն 2017-2022թթ. Ծրագրի իրականացման համար ՀՀ գյուղատնտեսության նախարարը իր 2017 թվականի դեկտեմբերի 12-ի N ՌՄ/ԼԻ-1/11301-17 գրությամբ դիմել է ՀՀ կառավա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ություն Ծրագրի ընդունման ժամկետը մինչև 2018 թվականի ապրիլի 1-ը երկարաձգելու խնդրանքով, որն ընդունվել է ի գիտություն (ՀՀ վարչապետի 19.12.2017թ. N 02/23.14/27790-17 հանձնարարական):
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	36.	Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացի բարելավում	– **Գյուղատնտեսական արտադրանքի իրացման և մթերումների գործընթացը կանոնակարգելու, մթերման ենթակա արտադրանքի որակական ցուցանիշների և նվազագույն գնի որոշման նպատակով ոլորտային խորհուրդների ստեղծում՝ ներգրավելով արտադրողներին, մթերողներին և ոլորտային միություններին,** Հաստատվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի «Խաղողագործության և գինեգործության ոլորտային խորհուրդ ստեղծելու և խորհրդի կազմը հաստատելու մասին» N 203-Ա և հոկտեմբերի 3-ի «Խաղողագործության և գինեգործության ոլորտային խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» N 212-Ա հրամանները: – **գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառների կազմակերպում** Սկսած 2017 թվականի հունիսի 10-ից Երևան քաղաքի Կասյան փողոցի վերին հատվածում և հուլիսի 29-ից «Մալիբու» սրճարանի հարևանությամբ յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին գործում են գյուղատնտեսական մթերքների տոնավաճառներ: 2017 թվականի սեպտեմբերի 9-ից Նոր Նորք վարչական շրջանում՝ «Պալաս» առևտրի կենտրոնի հարևանությամբ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			յուրաքանչյուր շաբաթ ու կիրակի օրերին սկսել է կազմակերպվել գյուղատնտեսական մթերքի 3-րդ տոնավաճառը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	37.	Գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտական դասընթացների կազմակերպում	– **ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի աշխատանքային ծրագրերում գյուղատնտեսության զարգացման, համայնքների գյուղատնտեսության ինչպես հիմնական, այնպես էլ հեռանկարային և զարգացող ուղղությունների, բացահայտված կարիքների վերաբերյալ թեմաների ընդգրկում ու մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,** Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Մի շարք փակ բաժնետիրական ընկերությունների լուծարելու մասին» N 380-Ա որոշման, լուծարման գործընթաց սկսվեց ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ և ՀՀ 10 մարզերում գործող «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ-ների նկատմամբ: Նշված խորհրդատվական կենտրոնների լուծարման կապակցությամբ, վերջիններիս գյուղատնտեսության աջակցության և խորհրդատվական գործառույթները փոխանցվել են Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին: – **տնտեսավարողներին կմատուցվեն հետևյալ ծառայությունները՝ շուրջ 494 սեմինար, 407 դաշտային**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ուսուցում և 75 փորձացուցադրական աշխատանք, 40 ռադիոհեռուստահաղորդում, 246 թեմայով տեղեկատվական թերթիկների տպագրում, 75 համար թերթի թողարկում, 25 ծրագրային խորհրդատվություն, 20 տեսանյութ, վարկերի հավաստագրման 60 դասընթաց Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի 10 մարզային կառույցների կողմից իրականացվել է խմբային 10 դասընթաց, որոնց մասնակցել է 214 ֆերմեր: Պետության կողմից սուբսիդավորվող մատչելի գյուղատնտեսական վարկեր ստանալու նպատակով հնարավոր շահառուների համար կազմակերպվել է վարկերի հավաստագրման 158 դասընթաց (3160 մասնակից): Եռամսյակային կտրվածքով նկարահանվել է խորհրդատվական բնույթի 10 տեսանյութ:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	38.	Ագրարային ոլորտում արտաքին ներդրումների ներգրավման գործընթացի ակտիվացում	– **Երկկողմ և բազմակողմ համագործակցության արդյունքում ֆինանսական և նյութական ռեսուրսների ներգրավման ուղղությամբ բանակցությունների իրականացում** 2017 թվականի մարտի 21-ին հայ-կանադական համագործակցության, մասնավորապես՝ անասնակերի և արոտավայրերի, կենդանիների գետետիկայի բարելավման, մսի և կանթամթերքի արտադրության և առևտրի բնագավառներում, զարգացման նպատակով ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: - Իրանական կողմի հետ կայացած բանակցությունների

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			արդյունքում իրանական կողմը պատրաստակամություն է հայտնել ներդրումներ կատարել ձկնաբուծության, ջերմոցային տնտեսությունների և անասնաբուծության բնագավառներում, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի հավաքման ձեռնարկություն ստեղծելու նպատակով: - 2017 թվականի մարտի 21-ից 24-ը Աբու Դաբիում կայացած «Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ» ներդրումային համաժողովի ընթացքում ներկայացվել են գյուղատնտեսության բնագավառում նոր ներդրումային հնարավորությունները: - 2017 թվականի մարտի 23-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացել է հանդիպում ՌԴ-ի արդյունաբերության և առևտրի նախարարության մեքենաշինության վարչության պետ Ե. Կորչևոյի հետ, որի ընթացքում քննարկվել են ռուսական ներդրումներով մեքենատրակտորային հավաքակայանների ստեղծման հարցերը: - 2017 թվականի ապրիլի 18-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդունել է ջերմոցաշինությամբ և տոմատի մածուկի արտադրությամբ զբաղվող իրանական մի շարք խոշոր ընկերությունների ղեկավարների: Իրանցի գործարարները ցանկություն են հայտնել Հայաստանում հիմնել լոլիկի վերամշակման գործարան՝ արտադրանքը Եվրասիական տնտեսական միության երկրներ արտահանելու նպատակով: ՀՀ գյուղատնտեսության նախարարը գործարարների հետ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			փոխգործակցությունը գործնական հիմքերի վրա դնելու նպատակով առաջարկել է ներկայացնել բիզնես-ծրագիր: - 2017 թվականի մայիսի 22-25-ը Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարար Մահմուդ Հոջջաթիի գլխավորած պատվիրակության Հայաստան կատարած այցի ընթացքում քննարկվել են այգեգործության, բուսաբուծության, ջերմոցային տնտեսությունների և ձկնաբուծության ոլորտներում հայ-իրանական համագործակցության հեռանկարները: Այցի արդյունքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության կազմակերպության միջև բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը: - 2017 թվականի հունիսի 30-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման նպատակն էր՝ Արգենտինայի և Հայաստանի միջև «Գիտասփյուռի և գյուղատնտեսական մեխանիզացման համակարգի ամրապնդում» տեխ-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			նիկական ծրագրի համառոտ ներկայացումը: Ծրագրով ընթացիկ տարում կազմակերպվել է խորհրդատուների այց Արգենտինա՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու և միջազգային փորձին տեղում ծանոթանալու նպատակով: Բացի այդ, 2018 թվականի ընթացքում նախատեսվում է Արգենտինայում կազմակերպել դասընթացներ ուսուցանողների համար, ինչպես նաև տեսակոնֆերանսների միջոցով վերապատրաստման դասընթացներ անցկացնել Հայաստանում: - 2017 թվականի հուլիսի 4-ին կայացել են հայ-գերմանական տնտեսական բանակցություններ, որոնք կազմակերպվել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարենի և գյուղատնտեսության նախարարության խորհրդարանական պետքարտուղար Պետեր Բլեզերի գլխավորած պատվիրակության 2017 թվականի հուլիսի 4-5-ը Հայաստան կատարած այցի շրջանակներում: Բանակցություններին մասնակցել են Գերմանիայի բիզնես ոլորտի ներկայացուցիչներ, որոնց թվում էին նաև գյուղտեխնիկայի և սարքավորումների արտադրությամբ զբաղվող ընկերություններ: Բանակցություններին հաջորդել են անհատական B2B (business to business) հանդիպումներ, որոնց մասնակցել են Գերմանիայի գործարար շրջանակների ներկայացուցիչներ, ինչպես նաև հայ գործարարներ: - 2017 թվականի հուլիսի 26-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդունել է Իսրայելի Պետության տարածաշրջանային համագործակցության նախարար Ցախի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			Հանեգբիի գլխավորած պատվիրակությանը: Քննարկվել է երկու երկրների միջև համագործակցության խթանման կարևորությունը՝ շեշտադրելով մասնավոր հատվածի ներգրավումն ու այդ ուղղությամբ գործնական քայլեր իրականացնելու անհրաժեշտությունը: Իսրայելական կողմը տեղեկացրել է, որ Իսրայելի կառավարությունը նախատեսում է Հայաստանի հետ նոր ծրագրեր իրականացնել: Մասնավորապես, իսրայելցի գործարարները հետաքրքրված են Հայաստանում հիմնել կաթի վերամշակման գործարան, ինչպես նաև երկարաժամկետ վերապատրաստումներ իրականացնել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների համար՝ իսրայելական գյուղատնտեսության փորձին ծանոթանալու և նորարարական տեխնոլոգիաները Հայաստանում ներդնելու նպատակով: - ՀՀ գյուղատնտեսության նախարարը 2017 թվականի հունիսի 27-ին ընդունել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) փոխտնօրեն, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի հետ համագործակցության դեպարտամենտի ղեկավարի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակությունը ներկայացրել է հետագա համագործակցության հեռանկարները, մասնավորապես նշվել է, որ աջակցություն կցուցաբերվի Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանը և գյուղատնտեսության ոլորտում ներդրումային նոր նախաձեռնությունների իրականացմանը: Շվեյցարական կողմը նաև պատրաստակամու-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			թյուն է հայտնել աջակցել թողարկվող արտադրանքի, հատկապես կաթնամթերքի և մսամթերքի որակի բարելավմանը և արտահանումների ծավալների ավելացմանը՝ միաժամանակ կարևորելով Հայաստանում որակի միջազգային չափանիշների ներդրումն ու սննդամթերքի անվտանգության ապահովումը: - 2017 թվականի սեպտեմբերի 20-ին կայացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի հանդիպումը հոլանդական մի շարք ընկերությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման նպատակն էր քննարկել գյուղատնտեսության բնագավառում հայ-հոլանդական գործարար կապերի ընդլայնման հնարավորությունը, մասնավորապես Հայաստանում ջերմոցաշինության, բանջարեղենային պահեստների և սառնարանային տնտեսությունների ստեղծման, թռչնաբուծարաններում և անասնապահական ֆերմաներում հոլանդական սարքավորումների տեղադրման ուղղությամբ: – 2017 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության առաջնորդության բանիմացների խորհրդի անդամ, Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ այաթոլլահ Հասան Ալամիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ոչխարաբուծության զարգացմանը, Հայաստանում «հալալ» կանոններով կատարվող մորթի կազմակերպմանն,

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ինչպես նաև սպանդանոցների ընդլայնմանը վերաբերող հարցեր: – **միջազգային կազմակերպությունների անդամակցության շրջանակներում ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում** - Ընթացքի մեջ են աշխատանքները գերմանական KfW բանկի հետ, մասնավորապես՝ Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության նախագծմանն ու իրականացմանն աջակցելու նպատակով: - ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ տարվում են աշխատանքներ՝ դոնորական աջակցությամբ նոր տեխնիկական համագործակցության ծրագրերի իրականացման ուղղությամբ, մասնավորապես՝ ՌԴ կառավարության կողմից ֆինանսավորվող 6 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ սննդամթերքի անվտանգության տարածաշրջանային ծրագիրը: - 2017 թվականի հունիսի 9-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդունել է Համաշխարհային բանկի ներկայացուցիչներին, որոնք Հայաստանում իրականացնում են ՓՄՁ-ների կարողությունների ուժեղացման ծրագիր, հատկապես՝ ոգելից խմիչքների արտահանումների աջակցության, նոր շուկաների հայտնաբերման, արտահանումների ծավալների ավելացման ուղղությամբ: - 2017 թվականի հունիսի 12-ին ՀՀ գյուղա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			տնտեսության նախարարն ընդունել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի պատվիրակությանը: Հանդիպման հիմնական նպատակը խաղողի այգիների քարտեզագրումն էր, որը հնարավորություն կտա համապարփակ տեղեկատվություն ունենալ Հայաստանում աճեցվող խաղողի այգիների վերաբերյալ: - 2017 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև ստորագրվել է ՌԴ կառավարության դոնորական աջակցությամբ նոր համագործակցության ծրագիր («Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում սնուցման և պարենային ապահովության հզորացմանն ուղղված կարողությունների ուժեղացում» GCP/GLO/674/RUS): – **պետությունների հետ առևտրատնտեսական, գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում գյուղատնտեսությանն առնչվող հարցերի և ներդրումային ծրագրերի քննարկում** Հաշվետվու ժամանակաշրջանում կայացած հայ-չեխական, հայ-լատվիական, հայ-իրաքյան, հայ-եգիպտական, հայ-ղազախական, հայ-լիտվական, հայ-թուրքմենական, հայ-տաջիկական, հայ-վիետնամական միջ-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կառավարական հանձնաժողովների նիստերի ընթացքում քննարկվել են նաև ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունները: – **միջազգային ագրոպարենային ցուցահանդեսներին գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնակցությանն աջակցություն** Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աջակցությամբ՝ 1. Հայկական գինի արտադրող 19 ընկերություններ մասնակցել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Նոյշտադ քաղաքում 2017 թվականի փետրվարի 25-ի կայացած «MUNDUS VINI 20th Grand International Wine Awards» մրցանակաբաշխությանը՝ ներկայացնելով գինիների 58 տեսականի: Հայկական գինիներն արժանացել են 23 մեդալի, որից 10 ոսկե և 13 արծաթե, իսկ հայկական գինիների շնորհանդեսն արժանացել է «Լավագույն շնորհանդես» մրցանակի: 2. Հայկական գինի արտադրող 14 ընկերություններ միասնական տաղավարով մասնակցել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում 2017 թվականի մարտի 19-ից 21-ը կայացած «PROWEIN 2017» միջազգային ցուցահանդեսին՝ ներկայացնելով գինիների 85 տեսականի: 3. Հայկական գինի արտադրող 12 ընկերություններ միասնական տաղավարով մասնակցել են Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2017

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			թվականի փետրվարի 6-ից 10-ը կայացած «Պրոդ էքսպո-2017» միջազգային ցուցահանդեսին՝ ներկայացնելով գինիների ավելի քան 50 տեսականի: 4. Հայկական գինի և կոնյակ արտադրող 13 ընկերություն մասնակցել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանհայ քաղաքում սույն թվականի նոյեմբերի 14-ից 16-ը կայացած «ProWine China 2017» գինիների և ալկոհոլային խմիչքների ամենամյա միջազգային ցուցահանդեսին՝ ներկայացնելով ավելի քան 30 տեսակի հանգիստ և փրփրուն գինիներ և թունդ ալկոհոլային խմիչքներ: Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագրի շրջանակներում Եվրոպական Միության համաֆինանսավորմամբ և Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) աջակցությամբ հայկական մի շարք ընկերություններ առաջին անգամ մեկ ընդհանուր տաղավարով՝ «Օրգանական Հայաստան» խորագրի ներքո, 2017 թվականի փետրվարի 15-ից 18-ը մասնակցել են Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում կայացած «BIOFACH 2017» օրգանական սննդի համաշխարհային առաջատար ցուցահանդեսին: Միջոցառմանը մասնակցել են հայկական 6 ցուցադրող և 7 այցելու ընկերություններ: Բացի այդ, ագրովերամշակման ոլորտում գործող ընկերությունները պարբերաբար իրազեկվել են արտերկրում կազմակերպվող ագրոպարենային ոլորտի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ցուցահանդեսների և տոնավաճառների մասին:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	39.	Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներգրավման և ոռոգվող տարածքների ընդարձակման մեխանիզմների մշակում, անտառապատման և անտառավերականգնման ծավալների ընդլայնում	– **Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի առկա (փաստացի) վիճակի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում** ՀՀ վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 1479-Ա որոշմամբ՝ ՀՀ ամբողջ տարածքի կադաստրային քարտեզագրման աշխատանքների ճշգրտման և դրան զուգահեռ հողային ֆոնդի ամբողջական մոնիթորինգի իրականացման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Միջգերատեսչական աշխատանքային խմբին հանձնարարվել է 3-ամսյա ժամկետում ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել աշխատանքների իրականացման ժամանակացույցը և համապատասխան ֆինանսավորման գնահատականները: ՀՀ վարչապետի մոտ 2017 թվականի նոյեմբերի 28-ին կայացած խորհրդակցության ընթացքում տրվել է հանձնարարական (N 24.13/[431349]-17 արձանագրության 1-ին կետի 2)-րդ ենթակետի «դ» պարբերություն) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ բնապահպանության նախարարների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հետ համատեղ համադրել գյուղատնտեսական նշանակությամբ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			օգտագործվող հողերի հաշվառման տվյալների շտեմարանները և բացահայտել խնդիրները: Աշխատանքներ են տարվում հարցումների միջոցով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի մասին տեղեկատվություն հավաքագրելու, առանձին համայնքների համար՝ չմշակվող հողերը գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկման համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ նախապատրաստելու ուղղությամբ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից միջոցներ են ձեռնարկվում աշխարհագրական տվյալների թվայնացված (ԱՏԹ) համակարգի ներդրման պիլոտային ծրագրի իրականացման ուղղությամբ – **մասնատված հողակտորների խոշորացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ հողերի խոշորացման (կոնսոլիդացման) մեխանիզմների մշակում** Կոնկրետ միջոցառումների մշակումը հնարավոր և նպատակահարմար կլինի վերը նշված գործընթացների (այդ թվում՝ ԱՏԹ համակարգի ներդրման) ավարտից ու գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվությանը տիրապետելուց հետո: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում մշակված՝ կաթիլային ոռոգման համակարգերի, հակակարկտային ցանցերի ներդրման, գյուղատնտեսության

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, ինտենսիվ այգիների հիմնման, գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձարկման ծրագրի իրականացման, գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրերի իրականացումը կարող է շահագրգռել հողօգտագործողներին և խթան հանդիսանալ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ հողերի խոշորացման համար: Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մեխանիզմներ նախատեսվում են նաև ներկայումս նախարարությունում շրջանառվող «Գյուղատնտեսության գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծում: – **ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խրախուսում՝ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ցուցադրական տնտեսությունների հիմնում** Մշակվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N ԻԱ/ԱԲ-2/10999-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (ծրագիրն ընգրկվել է 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտում): Ծրագրով նախատեսվում է խթանել բազմամյա տնկարկներում՝ պտղատու և խաղողի այգիներում, բարձրարժեք մշակաբույսերի դաշտերում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման գործընթացը՝ սուբսիդավորելով կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման նպատակով մինչև 3 տարի մարման ժամկետով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքներն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողերին տրամադրվեն առավելագույնը 2 %-ով:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	40.	Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության ծրագրի իրականացում	– **Ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության 2017 թվականի մոնիթորինգային պլանի կազմում, 2016 թվականի մնացորդային նյութերի հսկողության արդյունքների ամփոփում և դրանց ԵՄ-ի սննդի գրասենյակ ներկայացում** Կազմվել է 2017 թվականի ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը և ամփոփվել են 2016 թվականին ձկնաբուծական և մեղվաբուծական տնտեսություններում իրականացված մշտադիտարկման շրջանակներում պլանով նախատեսված ձկան՝ 150 և մեղրի՝ 130 նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքները, որոնք ՀՀ կառավարության 2014 թվա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կանի օգոստոսի 21-ի N 898-Ն որոշման 5-րդ կետի համաձայն՝ 2017 թվականի առաջին եռամսյակում ներկայացվել են Եվրոպական հանձնաժողովի առողջության և սննդամթերքի անվտանգության գլխավոր տնօրինություն: – **մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության 2017 թվականի մոնիթորինգային պլանի կազմում, 2016 թվականի մնացորդային նյութերի հսկողության արդյունքների ամփոփում և դրանց ԵՄ-ի սննդի գրասենյակ ներկայացում** Հայաստանի Հանրապետությունից ԵՄ երկրներ մեղր արտահանելու նպատակով կազմվել է 2017 թվականի մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը և 2016 թվականի մեղրի լաբորատոր փորձաքննության արդյունքները ամփոփվել և ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 898-Ն որոշման 5-րդ կետի համաձայն՝ 2017 թվականի մարտի 30-ին ներկայացվել են Եվրոպական հանձնաժողովի առողջության և սննդամթերքի անվտանգության գլխավոր տնօրինություն: 2017 թվականի մարտի 30-ի N 01/13.1/1294-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: – **սահմանված կարգով ձկան՝ 150 ու մեղրի՝ 130 նմուշառում և նմուշների ներկայացում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ լաբորատոր փորձաքննությունների նպատակով**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից կազմվել է 2017 թվականի ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը և ամփոփվել են 2016 թվականին ձկնաբուծական և մեղվաբուծական տնտեսություններում իրականացված մշտադիտարկման շրջանակներում պլանով նախատեսված ձկան՝ 150 և մեղրի՝ 130 նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքները, որոնք ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 898-Ն որոշման 5-րդ կետի համաձայն՝ 2017 թվականի առաջին եռամսյակում ներկայացվել են Եվրոպական հանձնաժողովի առողջության և սննդամթերքի անվտանգության գլխավոր տնօրինություն: - **«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում ձկան և մեղրի նմուշներում մնացորդային նյութերի բացահայտման և հաստատման լաբորատոր հետազոտությունների իրականացում՝ ԵՄ-ի ստանդարտներով, մեթոդներով** Ծառայության պետի հրամաններով հաստատվել են «Ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը հաստատելու, անասնահամաճարակային մշտադիտարկում և նմուշառում իրականացնելու մասին» և «Մեղրում մնացորդային նյութերի հսկողության պլանը հաստատելու, անասնահամաճարակային մշտադի-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			տարկում և նմուշառում իրականացնելու մասին» հրամանները, որոնց համաձայն հանրապետության տարածքում ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներում, մեղվաբուծությամբ զբաղվող տնտեսություններում իրականացվում են մշտադիտարկումներ: Մեղրի և ձկան իրացման շղթայի փուլերում կատարվում են նմուշառումներ, նմուշները ներկայացվում են Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ, որտեղ նմուշները կենթարկվեն մնացորդային նյութերի նկատմամբ բացահայտող և անհրաժեշտության դեպքում հաստատող մեթոդներով հետազոտությունների՝ ԵՄ ստանդարտների և մեթոդների համաձայն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	41.	Հանրապետությունում իրացվող պեստիցիդների որակի հսկողության իրականացում	– **Իրացվող պեստիցիդների նմուշառում** ՀՀ ամբողջ տարածքում իրականացվել են պեստիցիդների վաճառակետերի դիտարկումներ՝ համաձայն Ծառայության պետի հրամանների: Ընդհանուր հաշվով դիտարկվել է շուրջ 126 վաճառակետ, որոնցից 95-ում հայտնաբերվել են տարբեր տեսակի պեստիցիդների մակնշման խախտումներ, մասնավորապես՝ հայերեն մակնշման բացակայություն և թերի մակնշում: Տվյալ պեստիցիդների իրացումը ժամանակավորապես կասեցվել է և տրվել են հանձնարարականներ՝ խախտումները վերացնելու ուղղությամբ: Սահմանված ժամկետում բոլոր խախտումները վերացվել են: - **պեստիցիդների նմուշների լաբորատոր հետա-**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			զոտություն՝ ազդող նյութի պարունակությունը որոշելու նպատակով: Պեստիցիդների ազդող նյութի պարունակությունը որոշելու նպատակով կատարվել են նմուշառումներ և իրականացվել շուրջ 600 փորձաքննություն, արդյունքում թվով 5 վաճառակետերից վերցված որոշ պեստիցիդների նմուշներում ազդող նյութերի պարունակությունները չեն համապատասխանել սահմանված չափորոշիչներին: Բացի այդ, թվով 13 վաճառակետերում հայտնաբերվել են ժամկետանց պեստիցիդներ: Վերոնշյալ բոլոր պեստիցիդների վաճառքն արգելվել է, տեղափոխվել և ի պահ է հանձնվել Ծառայության Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն ՊՈԱԿ-ին:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	42.	Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման կարողությունների զարգացում	– **Ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի արդիականացում, միջազգային պահանջներին համապատասխանեցում, անասնաբուժական ռիսկերի գնահատման մեթոդների ներդրում** Ծառայությունում թվայնացվել է ապրանքի ռիսկայնության հաշվարկման գործընթացը: Ստեղծվել է ռիսկերի էլեկտրոնային հաշվիչ: Այսուհետև տնտեսավարողները կարող են ապրանքի ռիսկայնության մակարդակը նախապես և ինքնուրույն հաշվարկել Ծառայության պաշտոնական կայքում՝ snund.am-ում, տեղադրված ռիսկերի էլեկտրոնային հաշվիչի միջոցով: Ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կենտրոնի արդիականացման ուղղությամբ անասանաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների համար քննարկման փուլում են գտնվում համապատասխան ոլորտների ռիսկերի գնահատման 2017 թվականի ծրագրերը, որի իրականացման համար ընթացքի մեջ է միջազգային կառուցների (ՖԱՕ և ՕՔՍՖԱՄ) հետ համագործակցությունը հետևյալ ուղղություններով՝ ռիսկերի գնահատման օբյեկտների (կարանտին վնասակար օրգանիզմ, հիվանդություններ) ընտրությունը ու ճշգրտումը, գնահատման համար անհրաժեշտ այլ միջոցառումները՝ մոնիթորինգ, քարտեզագրում և այլն, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի ստեղծման ֆինանսական աջակցություն և այլն: Հայաստանի Հանրապետության ԵԱՏՄ անդամակցությունից հետո «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է Գիտական կենտրոնի արդիականացում: Ներկայումս կազմվել է շենքի տեխնիկական բնութագիրը, կատարվում են նախագծային աշխատանքները, և այդ գործընթացները դեռևս ընթացքի մեջ են:
ՀՀ գյուղատնտեսության	43.	Սահմանային վերահսկողության կազմակերպման և իրականացման արդիականացում	– **միջազգային պահանջներին համապատասխան՝ սահմանային հսկիչ կետերի շենքային և աշ-**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)			**խատանքային պայմաններ, վերանայված սահմանային վերահսկողության ընթացակարգեր՝ սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմանների բարելավման, միջազգային պահանջներին սահմանային վերահսկողության համապատասխանեցման միջոցով** Ապրանքների ներմուծման ընթացակարգերը և դրանց վրա ծախսվող ժամանակը կրճատելու նպատակով արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող ներմուծման գործառնությունների ռիսկայնության աստիճանի գնահատման նոր համակարգի ներդրումն ապահովելու նպատակով՝ գործունեությունը «Մեկ պատուհան» սկզբունքով կազմակերպելու համար 2017 թվականի մարտի 3-ին Ծառայությունում բացվել է սպասարկման նոր կենտրոն, որը առավել համակարգված ու կենտրոնացված ծառայություններ կմատուցի սպառողներին ու տնտեսավարողներին՝ էականորեն նվազեցնելով վարչարարությունը, կրճատելով ծառայությունների մատուցման ժամանակահատվածը, բացառելով տեղեկատվություն ստանալու նպատակով մի քանի ստորաբաժանում դիմելու անհրաժեշտությունը, նվազագույնի հասցնելով տնտեսավարող-պաշտոնյա շփումը, ապահովելով իրականացվող բոլոր գործընթացների թափանցիկությունը և տնտեսավարողներին սերտիֆիկատների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի էլեկտրոնային տրամադրումը:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			Ծառայության կայքում տեղադրվել է սննդամթերքի ներմուծման ռիսկերի էլեկտրոնային հաշվիչ, որը ներմուծող տնտեսավարողներին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության մակարդակը: 2017 թվականի փետրվարի 15-ին հաստատվել է Ծառայության պետի «Բեռն արտահանելու նպատակով ներկայացվող հայտերի քննարկման ընթացակարգը և տվյալների բազայի վարման կարգը, ինչպես նաև արտադրական գործունեության մասին տեղեկատվության տրամադրման ձևաչափը սահմանելու մասին» N 36-Ա հրամանը, որով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բեռ արտադրող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի արտահանողների արտադրական գործունեության տվյալների բազայի վարման հետ կապված հարաբերությունները և սննդամթերքը, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերը, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքները արտահանելու նպատակով ներկայացվող հայտերի քննարկման ընթացակարգերը, ինչպես նաև դրանց իրականացման հետ կապված հարաբերությունները, որի արդյունքում բազայում ներառված և Ծառայության մշտական հսկողության տակ գտնվող տնտեսավարող սուբյեկտները ազատվում են արտահանման գործընթացում Ծառայության

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			մարզային կենտրոնի կողմից օրենսդրությամբ պահանջվող 8-րդ ձևի տեղեկանքի տրամադրման համար հիմք հանդիսացող արտահանվող խմբաքանակի նմուշառումից, լաբորատոր փորձարկումների համար ծախսվող ժամանակահատվածից և ծախսերից: – **«Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի պահանջները հաշվի առնելով՝ պետական սահմանի անցման կետերում ներգրավված մարմինների ստորաբաժանումներում կառուցվածքային փոփոխությունների իրականացում՝ հաշվի առնելով մարմինների գործառույթների վերաբաշխումն ու պատվիրակումը** ՀՀ մաքսային կետերում մեկ պատուհանի սկզբունքի լիարժեք կիրառման միջոցով, Հայաստանի Հանրապետությունում արտադրված սեզոնային մրգերի արտահանման վարչարարությունը էապես պարզեցվել է, ինչպես նաև մշակվել են այդ գործընթացը հնարավորինս արագ, արդյունավետ և տնտեսավարողի համար մատչելի դարձնելու մեխանիզմներ: Ծառայության սահմանային հսկիչ կետերում սահմանվել է շուրջօրյա խստացված աշխատանքային ռեժիմ: «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի ներդրման արդյունքում բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է առավելագույնը 20 րոպեում՝ արտահանվող արտադրանքի խմբաքանակն ակնադիտական զննման ենթարկելու արդյունքում բույսերի վնասակար օրգանիզմներ (նշաններ) չհայտնաբերելու

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			դեպքում: Հանրապետության տարածքում բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա, եթե տվյալ խմբաքանակի արտադրավայրում բույսերի կարանտին վնասակար օրգանիզմներ չեն հայտանբերվել, ապա սահմանային վերահսկողության ժամանակ, ակնադիտական զննումից հետո բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է անմիջապես: Հակառակ պարագայում տվյալ բեռն ուղարկվում է լաբորատոր փորձաքննության: Վրացական և ռուսական կողմերի հետ աշխատանքային կարգով քննարկվել է բուսասանիտարական ենթահսկման բեռները՝ հատկապես արագ փչացող գյուղմթերքը «Վերին Լարս» անցակետով պարզեցված ընթացակարգով և նվազեցված վարչարարությամբ արտահանելու հարցը՝ կարևորելով «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի աշխատանքը: Միջազգային պահանջներին համապատասխան՝ Բավրայի սահմանային հսկիչ կետի շենքային և աշխատանքային պայմանները բարելավվել են՝ 2017 թվականի հոկտեմբերի 1-ին շահագործման է հանձնվել Բավրայի սահմանային հսկիչ կետի նոր մասնաշենքը կահավորված նոր տեխնիկայով և գույքով, նորագույն լաբորատոր սարքավորումներով: «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի պահանջները բարելավելու նպատակով Ծառայության աշխատակազմում ստեղծվել է նոր բաժին՝ ԱՏԳ իրականաց-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			նողների սպասարկման բաժին, որի կազմում կա թվով 17 հաստիք՝ համակարգչային օպերատորներ, որոնց աշխատավայրը պետական սահմանի անցակետերում է և նրանց կողմից է իրականացվում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգում հայտի ստեղծումը և ուղարկում, ինչով կրճատվել է սահմանային հսկիչ կետի մասնագետ-տեսուչի աշխատաժամանակը: ԱՏԳ իրա-կանացնողների սպասարկման բաժինն ունի հաստիք, որոնք պարբերաբար հսկողություն են իրականացնում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի աշխա-տանքային գործունեության նկատմամբ: ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով վերանայվել է անասնաբուժական հսկման ենթակա արտադրանքի արտահանման գործ-ընթացում պետական վերահսկողության և համապա-տասխան փաստաթղթերի տրամադրման ընթաց-կարգը, պարզեցվել և հստակեցվել է վարչարարու-թյունը, կրճատվել են ժամկետները: 2017 թվականի նոյեմբերի 17-ին տեղի է ունեցել Հայաս-տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարավային մաք-սատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնում

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			Մեղրիի մաքսային կետի արդիականացման և վերակառուցման ծրագրի նախապատրաստական աշխատանքների համակարգման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվել է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների պահման տարածքի հարցը, որի նպարակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել Մեղրիի մաքսային կետի արդիականացման և վերակառուցման արդյունքում նախատեսվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների պահման տարածքին ներկայացվող տեխնիկական չափանիշները:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	44.	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության լաբորատոր կարողությունների զարգացում	– **ստացված սարքավորումների տեղակայում,** 2015-2017թթ. համար նախատեսված սարքավորումները ձեռք են բերվել գրեթե ամբողջությամբ, ինչն էլ իրատեսական է դարձնում միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների մատուցումը, դրանց տեսակների և քանակների ավելացմամբ: **- համապատասխան մեթոդների ներդրում** 2017 թվականին Ծառայության կողմից վերանայվել են պետական վերահսկողության շրջանակներում լաբորատոր ծառայությունների ձեռքբերման սկզբունքները, պահանջվող լաբորատոր փորձաքննությունների տեսակները, մեթոդները և գնացուցակը: «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կենտրոն» ՊՈԱԿ-ն ընդլայնել է Սննդամթերքի անվտանգության փորձարկման լաբորատորիայի հավատարմագրման ոլորտը արագ (էքսպրես) մեթոդների ներդրման մասով, ինչպես նաև փոխել է վերապահմամբ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կարգավիճակը՝ առանց վերապահման հավատարմագրվածի: – **անձնակազմի վերապատրաստում,** Ծառայության անձնակազմը պարբերաբար վերապատրաստվում է ինչպես հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: – **«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ միջազգային պահանջներին համապատասխան հավատարմագրման, լաբորատոր նոր սարքավորումների ձեռքբերման և միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների մատուցում, հետազոտությունների տեսակների և քանակների ավելացում** ՀՀ-ից ԵՄ տարածք տեղական արտադրության ձկան շուկայահանման հնարավորությունը դիտարկելու և տեղական պայմաններում աճեցվող ձկան արտահանման թույլտվություն ստանալու նպատակով Ծառայության հրավերով Եվրոպական Հանձնաժողովի առողջության և սննդի անվտանգության գլխավոր տնօրինության կողմից աուդիտորական այցի շրջանակներում քննարկվել է, որ բոլոր վերլուծական մեթոդները որոնք

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			օգտագործվում են մնացորդային նյութերի մոնիթորինգի պլանի համար, երաշխավորվեն և վավերացվեն: Առաջարկությունը ընդունվել է ի գիտություն: Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների լաբորատորիան սկսել է ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան հավատարմագրման գործընթացը միջազգայնորեն փոխճանաչելի հավատարմագրման մարմնի, մասնավորապես՝ Ամերիկյան ազգային հավատարմագրման մարմնի (ANAB) կողմից: Գործընթացի շրջանակներում գերմանական չափագիտության ինստիտուտի՝ PTB-ի աջակցությամբ, հուլիսի 3-7-ը իրականացվել է գերմանական հավատարմագրման մարմնի՝ DAkkS-ի անկախ փորձագետ Կարստեն Ուինեկեյի կողմից նախնական գնահատում (աուդիտ): Մի քանի ամիս անց Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների լաբորատորիան ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան հավատարմագրման համար նախատեսված նախապատրաստական բոլոր աշխատանքները նախանշած ժամկետում ավարտին հասցնելուց հետո 2017 թվականի հոկտեմբերի 24-26-ը ըստ գործունեության իրականացման վայրի գնահատման նպատակով հյուրընկալեց Միջազգային հավատարմագրման ֆորումի (IAF) և Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային համագործակցության (ILAC) անդամ Ամերիկյան ազգային հավատարմագրման մարմնի՝

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ANAB-ի գլխավոր գնահատող Ռասուլու Դիալոյին: Գնահատման արդյունքում հաստատվեց, որ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների լաբորատորիան համապատասխանում է վերոնշյալ ստանդարտով սահմանված պահանջներին: Մինչև 2017 թվականի վերջ նախատեսվում է հաջողությամբ ավարտին հասցնել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հավատարմագրման ամբողջական գործընթացը: Սննդամթերքի փորձաքննության լաբորատորիան անցել է միջազգային հավատարմագրման նախնական բոլոր փուլերը և շուտով կստանա հավաստագիր՝ ինչը հնարավորություն կընձեռնի ՀՀ-ում գործող կազմակերպություններին լաբորատոր կառույցի եզրակացության հիման վրա ապրանքներ արտահանել ոչ միայն ԵԱՏՄ երկրներ, այլ նաև դեպի արտաքին այլ շուկաներ: «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարևորագույն մարզային կառույցները գտնվում են վերանորոգման և արդիականացման փուլում, որից երկուսը արդեն իսկ վերանորոգվել են և վերագործարկվել: Մասնավորապես, 2017 թվականի հոկտեմբերի 18-ին վերաբացվեց Շիրակի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			մարզային կենտրոնը: Արդեն հիմնանորոգված և վերջին սերնդի նորագույն սարքավորումներով վերազինված Գյումրու լաբորատոր կենտրոնը կմատուցի միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայություններ անասնաբուժության և սննդամթերքի անվտանգության ոլորտներում նաև արագ (էքսպրես) փորձարկումների միջոցով՝ ապահովելով տնտեսվարողների առավել արդյունավետ սպասարկումը «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի շրջանակներում: Եվրասիական տնտեսական միության անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև ստորագրված տեխնիկական և ֆինանսական աջակցության համաձայնագրով «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերանորոգման ու վերազինման իրականացման նպատակով Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության հսկողության դաշնային ծառայության լաբորատոր կարողությունները գնահատող փորձագետների և Ծառայության կողմից գնահատվել են «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի վերակառուցման, վերանորոգման տեխնիկական պայմանները և ծախսերի նախահաշիվը: Աշխատանքներ են տարվել վերանորոգման տեխնիկա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			կան առաջադրանքը կազմելու ուղղությամբ, որի հիման վրա կհայտարարվի մրցույթ:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	45.	Գյուղատնտեսության զարգացման համար մասնավոր ներդրումների հավաքագրման մեխանիզմների ստեղծում	– **Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումային ֆոնդի մոդելի մշակում** ՀՀ կենտրոնական բանկի աջակցությամբ մշակված «Բաժնեմասնակցային ֆոնդի միջոցով գյուղատնտեսության զարգացման համար մասնավոր ներդրումների հավաքագրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի լրամշակված տարբերակը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 22-ի N ԱՀ/ԳՂ-1/10639-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	46.	Անտառների կայուն կառավարման ապահովում	– **անտառապատման և անտառավերականգնման ծավալների ընդլայնում. անտառապատման և անտառավերականգնման աշխատանքների իրականացում (անտառապատում՝ շուրջ 70 հեկտար, անտառավերականգնում՝ շուրջ 100 հեկտար),** Կատարվել է շուրջ 423 հա անտառապատման և անտառավերականգնման աշխատանքներ, այդ թվում՝ - գարնանը և աշնանը շաբաթօրյակների միջոցով բոլոր «անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացվել են ծառատնկման աշխատանքներ 58.4 հա տարածքում: - Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսու-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			թյանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են անտառապատման աշխատանքներ 61.9 հա տարածքում: - ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ «Հողերի և անտառի կայուն կառավարման ներդնումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ծրագրի շրջանակներում «Լալվարի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ 93 հա տարածքում: - Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ Գուգարքի (100 հա) և Հրազդանի (100 հա) «անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացվել են կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ 200 հա: - Հայաստան-ծառատունկ ծրագրի կողմից «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են անտառապատման աշխատանքներ 10 հա: – **անտառապահպանական ծառայությունների կատարելագործման, հսկողության և անտառների կառավարման արդյունավետության բարձրացման ծրագրի մշակում,** Մշակվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N ՌՄ/ԱրՊ/11286-17 գրությամբ «Անտառպահպանական ծառայությունների կատարելագործման, հսկողության և անտառների կառա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			վարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ անտառային պետական մոնիթորինգի ծրագրի իրա-կանացման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառա-վարության արձանագրային որոշման նախագիծը ներ-կայացվել է ՀՀ կառավարություն: – **անտառային պետական մոնիթորինգի իրակա-նացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառ-մամբ.** - **ծառահատված տարածքների քանակական և որակական գնահատում,** - **քամատապալ հատվածների բացահայտում, գնահատում,** - **վնասատուներով և հիվանդություններով վա-րակված օջախների բացահայտում,** - **անտառի ծառատեսակային կազմի առանձ-նացում, քանակական տվյալներով ներկայացում,** - **հրդեհված անտառային տարածքների հայտ-նաբերում, գնահատում ըստ այրման ծանրության աստիճանի,** - **անտառ մուտք գործող ճանապարհների թվայնացված գծային շերտերի առանձնացում,** – **անտառապատման և անտառվերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքների**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ուսումնասիրություն Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ - արբանյակային պատկերների միջոցով հրդեհված տարածքների վերծանում շուրջ 102000 հա: - անօդաչու թռչող սարքով մոնիթորինգի իրականացում շուրջ 123 հա: - անտառային տարածքներ մուտք գործող ճանապարհների թվայնացում շուրջ 1090 հատ: - 2017 թվականի անտառային տարածքների մշակված պատկերների բազայի ստեղծում շուրջ 400000 հա: 2016-2017թթ. արբանայակային պատկերների վերծանման արդյունքում անտառածածկ տարածքների փոփոխությունների նախնական բացահայտում (ապօրինի հատումներ, քամատապալ տարածքներ, հիվանդություններով և վնասատուներով վարակված օջախներ) շուրջ 139686 հա:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական	47.	Միս և հաց տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրում	– **սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրման ժամանկացույցի սահմանում,** ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի (այսուհետ՝ Ծառայություն) 2017 թվականի մարտի 14-ի N 85-Ն հրամանի համաձայն սահմանվել է սանիտարական անձնագրերի տրամադրման կարգը, սանիտարական անձնագրի օրինակելի ձևը և ժամա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
ծառայություն)			նակացույցը, ըստ որի իրականացվում է տրան-սպորտային միջոցների փուլային անձնագրավորում: - **սանիտարական անձնագրերի տրամադրման փուլային անցում համաձայն ժամանակացույցի,** Ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավա-րողների հետ անցկացվել են մի շարք նախապատրաս-տական հանդիպումներ, քննարկումներ, տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն: Ծառայությունը տրանսպորտային միջոցների սանիտա-րական անձնագրերի տրամադրումը սկսել է 2017 թվականի օգոստոսի 1-ից: Դեկտեմբերի 6-ի դրությամբ Ծառայության կողմից սանիտարական անձնագրեր են տրվել 120 միս-մսամթերք տեղափոխող և 548 հաց-հացաբուլկեղեն տեղափոխող փոխադրամիջոցներին:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտե-սության նախարա-րության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	48.	Մսի իրացման և գնման ոլորտում պարտադիր սպանդանոցային մորթի ապահովում	– **պարտադիր սպանդանոցային մորթի ժամանակա-ցույցով սահմանված պետական գնումներով սպանդանոցային ծագման մսի ձեռքբերում,** Ծառայության պետի 2017 թվականի մարտի 14-ի N 85-Ն հրամանի համաձայն սահմանվել է սանիտա-րական անձնագրերի տրամադրման կարգը, սանիտա-րական անձնագրի օրինակելի ձևը և ժամանակացույ-ցը, որով կարգավորվում է պետական գնումներով սպանդանոցային ծագման մսի ձեռքբերման գործըն-թացը: – **անասնաբուժասանիտարական փորձաքննության և դրոշման գործընթացների նկատմամբ հսկողություն,**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			2017 թվականից հանրապետությունում թարմ մսի իրացման գործընթացում պարտադիր սպանդանոցային մորթի անցնելու գործընթացի պատշաճ ապահովման և մսի շուկաներում համապատասխան սանիտարական նորմեր սահմանելու նպատակով խստացվել է պետական վերահսկողությունը անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնող, սպանդ և իրացում իրականացնող կազմակերպությունների մոտ: Ծառայության պետի 2017 թվականի ապրիլի 21-ի N 2 հանձնարարականի համաձայն՝ հանրապետության բոլոր մարզերի և Երևան քաղաքի անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացվել է շրջայցեր: Վերջիններս իրազեկվել են ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ին N 142-Ն որոշմամբ հաստատված՝ կենդանիների սպանդից գոյացած մթերքի դրոշմման կարգի և նոր դրոշմակնիքների, ինչպես նաև Ծառայության պետի 2017 թվականի հունվարի 16-ի N 8-Ն հրամանով հաստատված անասնաբուժասանիտարական փորձաքննության եզրակացության և պիտակի ձևերի կիրառման վերաբերյալ: – **շահագրգիռ գործարար հատվածի ներկայացուցիչների հետ հանդիպումներ,** Ծառայություն են հրավիրվել շահագրգիռ գործարար հատվածի ներկայացուցիչներ (թարմ մսի իրացում, անասնաբուժասանիտարական փորձաքննություն,

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			սպանդ իրականացնող, պետական գնումներով սպանդանոցային ծագման միս ձեռքբերող), ովքեր տեղում ծանոթացել և իրազեկվել են պարտադիր սպանդանոցային մորթի անցնելու գործընթացի պատշաճ ապահովման, մսի շուկաներում համապատասխան սանիտարական նորմերին, մսի տեղափոխմանը ներկայացվող պահանջներին և դրանց կատարման ժամանակացույցին: – **շահագրգիռ կողմերին իրազեկում,** Շրջայցեր են կազմակերպվել հանրապետությունում գործող բոլոր սպանդ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ, տեղեկացվել փոխադրման և իրացման նպատակով սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական ծագման մթերքին և հումքին տրվող նոր N 5 ձևի անասնաբուժական վկայականի գործունեության վերաբերյալ: – **մսի ձեռքբերման և իրացման փուլերում մշտական վերահսկողության ապահովում** 2017 թվականի հունվար ամսից մինչև հոկտեմբերը՝ մսի ձեռքբերման և իրացման փուլերում Ծառայության կողմից մշտական վերահսկողություն (անասնահամաճարակային մշտադիտարկում) է իրականացվել մոտ 102 տնտեսավարող սուբյեկտների մոտ: Հայտնաբերված խախտումների համար տրվել են ցուցումներ և ժամկետներ են սահմանվել թերությունները վերացնելու ուղղությամբ: 2017 թվականի հունվար ամսից մինչև հոկտեմբեր՝ մսի

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ձեռք բերման և իրացման փուլերում Ծառայության կողմից մշտական վերահսկողություն (անասնահամաճարակային մշտադիտարկում) է իրականացվել մոտ 102 տնտեսավարող սուբյեկտների մոտ: Հայտնաբերված խախտումների համար տրվել են ցուցումներ և ժամկետներ են սահմանվել թերությունները վերացնելու ուղղությամբ: Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը, Ծառայության հետ համագործակցությամբ, պետական աջակցության տարեկան ծրագրի շրջանակներում աջակցում է տիպային սպանդանոցների ստեղծմանն ու հանրապետության ողջ տարածքում այս բիզնեսի աշխուժացմանը՝ ելնելով պարտադիր սպանդանոցային մորթին անցնելու՝ ՀՀ կառավարության ծրագրով սահմանված առաջնահերթությունից: Ծառայության հետ համագործակցությամբ «տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոնի» կողմից վերլուծություն է կատարվել հանրապետությունում իրացվող մսի ծավալների ու գործող սպանդանոցների թե հետազոտությունների, թե սփռվածության ուղղությամբ, ինչպես նաև՝ գնահատել նոր սպանդանոցներ ստեղծելու անհրաժեշտությունն ըստ մարզերի՝ ամբողջացնելով ներդրումների համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Ծրագրի նպատակն է՝ ՀՀ-ում տիպային սպանդանոցների և կենսունակ բիզնեսների հիմնում.

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			սպանդանոցային ենթակառուցվածքների ցանցի հիմնում ՀՀ ողջ տարածքում. սննդամթերքի անվտանգության պայմանների բարելավում. նոր աշխատատեղերի ստեղծում. ՀՀ կառավարության ծրագրի իրագործում: Ծրագրի իրագործման նպատակով Ծառայությունը նախաձեռնել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի հետ համատեղ իրականացնել սպանդանոցային կարողությունների զարգացման ծրագիր: Ծարագրի շրջանակներում գրանցվել են 15 սպանդանոց, պահանջարկը 40-70 է կախված հզորությունից, ստացվել է մասնակցության շուրջ 50 հայտ, ընտրվել են 19 ամենահաջողված ծրագրերը: Ծրագրի մեկնարկը տրվել է 2017 թվականի սեպտեմբերի 11-ին՝ հուշագրի ստորագրմամբ, Ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործող ընթացակարգերին համապատասխան իրականացվել են դասընթացներ, իրականացվել է մասնագիտական խորհրդատվություն: Ֆինանսական աջակցութունը կարող է տրամադրվել 5-10 մլն ՀՀ դրամի սահմաններում, 5 տարի մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով, վարկի ապահովվածությունը 100%, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությամբ: Հնարավորություն է ընձեռվում նաև առավել բարենպաստ և մատչելի պայմաններով ձեռք բերել սննդա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			մթերք տեղափոխող մասնագիտացված տրանսպորտային միջոցներ ֆինանսական վարձակալության (լիզինգի) միջոցով: Ֆինանսական վարձակալության (լիզինգ) ծրագիրն իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, «Արարատ բանկ» ԲԲԸ-ի և «Ակբա Լիզինգ» ՓԲԸ-ի հետ համգործակցությամբ: Ծրագրի շրջանակներում կարող են տրամադրվել անհատույց օգտագործմամբ մարզի առանձին բնակավայրերում 1000-2000 քմ չափով հողատարածք: Ծրագրի ավարտից հետո 2018 թվականին նախատեսվում է հանրապետության ողջ տարածքում ունենալ համաչափ տեղաբաշխված ընդհանուր թվով 40 սպանդանոց:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	49.	Սննդի շղթայի օպերատորների շրջանում որակի կառավարման համակարգերի ներդրման աշխատանքների իրականացում	– **սննդի շղթայի օպերատորներին իրազեկում,** Խորհրդատվություն է տրվել ռեեստրում և երրորդ երկրների ռեեստրում գրանցվելու, արտահանման, ներմուծման, սննդի շղթայի օպերատորների ցանկում գրանցվելու, արտադրական գործունեություն իրականացնելու, սննդամթերքի որակի և անվտանգության, հացի և մսի տեղափոխման պայմաններին ներկայացվող պահանջների, արտահանողների արտադրական գործունեության տվյալների բազայում գրանցվելու կարգի, Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների վերաբերյալ: Կազմակերպվել են հանդիպումներ կաթնամթերք, մսամթերք, հաց-հացաբուլկեղեն արտադրող կազմակեր-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			պությունների, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպիչների և խոշոր իրացման ցանցերի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են ոլորտային խնդիրները, օրենսդրական փոփոխությունները, ինչ-պես նաև ներկայացվել է տրանսպորտային միջոցնե-րին ներկայացվող սանիհիգիենիկ պահանջները, անձ-նագրերի տրամադրման կարգը, ինչպես նաև տրամա-դրվել է նշված պահանջների համապատասխանեց-մանն ուղղված խորհրդատվություն, կազմվել են արտա-դրողի և սպառողի ուղղեցույցերի նախագծեր: Ստորագրվել է համագործակցության հուշագիր Ծառա-յության և Հայաստանի ազգային ագրարային համալ-սարանի միջև՝ ընդլայնելով համատեղ ծրագրերի շրջա-նակն ու ուղղությունները: Համալսարանի ուսանող-կա-մավորների խմբի աջակցությամբ կատարվել են սննդի անվտանգության ապահովմանն և սննդի շղթայի օպե-ռատորների Ծառայության էլեկտրոնային բազայում գրանցվելուն ուղղված խորհրդատվական և իրազեկ-ման լայնածավալ աշխատանքներ: Այդ նպատակով մշակվել են խորհրդատվական և իրազեկման տեղեկա-տվական նյութեր և ծրագիր: Միջոցառումը կնպաստի սննդամթերքի ոլորտում գործունեություն իրականաց-նող տնտեսավարողների ամբողջական բազան ձևավո-րելու նախաձեռնությանը, որը էականորեն կբարելավի թե պետական, թե հանրային վերահսկողության որակը՝ նվազեցնելով սպառողի համար հնարավոր ռիսկերը: Ծառայության հատուկ վտանգավոր ախտածինների

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			ռեֆերենս լաբորատորիայում արտադրական պրակտիկա կանցնեն անասնաբուժական ֆակուլտետի ուսանողները, որը հետապնդում է նաև ոլորտում անասնաբույժ մասնագետների սերնդափոխության ապահովման նպատակ: Սեպտեմբերի 12-ից մեկնարկել է Ծառայության և Ազգային ագրարային համալսարանի համատեղ իրազեկման արշավը՝ ուղղված սննդամթերքի անվտանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը: Սննդամթերքի անվտանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման արշավը իրականացվում է «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» ՀԿ-ի աջակցությամբ՝ «Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության» կողմից ֆինանսավորվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում: Արշավի շրջանակներում տնտեսվարողներին ու սպառողներին բաժանվել են տեղեկատվական թերթիկներ, սպառողների և տնտեսվարողների ուղեցույցներ, ծառայության «Թեժ գիծը» ներկայացնող պիտակներ: Տեղեկատվական ուղեցույցներով ներկայացվել են փոխադրամիջոցի սանիտարական անձնագիր ունենալու պահանջի ժամանակացույցն ու օրենսդրական հիմքերը: Իրազեկման արշավի ընթացքում ներկայացվել են նաև միայն սպանդանոցային միս գնելու ու

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			իրացնելու պահանջը: Արշավը հատկապես կարևոր է տնտեսվարողների գրանցվելու պահանջը ծանուցելու առումով: Արդյունքում՝ Ծառայության սննդի շղթայի օպերատորների բազան էականորեն կհամալրվի՝ թույլ տալով իրականացնել առավել հասցեական և թիրախային վերահսկողություն: – **որակի կառավարման համակարգերի աուդիտի իրականացման նախապատրաստական աշխատանքներ** Մայիսի 24-ին Ծառայությունում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պատվիրակության կողմից անցկացվող խորհրդատվական սեմինարում հանդես է եկել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կարգավորման հարցերով կոլեգիայի անդամ, նախարար Վ. Կորեշկովը: Այցի շրջանակներում քննարկվել է սննդամթերքի անվտանգության ոլորտում Եվրասիական տնտեսական միության ընթացակարգերի առանձնահատկությունները՝ մասնավորեցնելով «Վտանգների աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման»՝ ՎՎՀԿԿ, համակարգն ու սննդամթերքի արտադրության գործընթացների ժամանակ դրա վրա հիմնված ընթացակարգերի մշակման, իրականացման և պահպանման պահանջը: ԵՏՀ պաշտոնյան անդրադարձել է ՎՎՀԿԿ համակարգերի ներդրման կարևորությանը և կիրառման սկզբունքներին՝ մանրամասնելով ռիսկերի վերլուծության և գնա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			հատման, հսկման կրիտիկական կետերի հայտնաբերման, մշտադիտարկման համակարգի մշակման, բոլոր փուլերի և ընթացակարգերի փաստաթղթավորման և արդեն մշակված համակարգի ստուգման գործընթացի կարևորությունը: Պատրաստվել են տեսահոլովակ և բուկլետ որակի կառավարման՝ «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի» (HACCP), համակարգի մասին, ներկայացվել են առավելությունները, արտադրության մրցունակության, արտադրական ու արտահանման ծավալների բարձրացման հնարավորությունները: Ծանուցումների և հաղորդագրությունների տեսքով տնտեսվարողներին տեղեկացվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 827-Ն որոշման մասին, որով մսի մշակման և պահածոյացման, մսամթերքի արտադրության, ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակման և պահածոյացման, մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման, կաթնամթերքի, ինչպես նաև համասեռված բաղադրիչներ պարունակող և սննդակարգային (դիետիկ) սննդի արտադրությամբ զբաղված այն կազմակերպությունները, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը գերազանցում է 250 մարդը, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը, պետք է մինչև 2017

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			թվականի հունվարի 1-ը իրենց արտադրություններում ներդրած լինեին պատշաճ ու հիգիենիկ արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի ներդրված համակարգ (HACCP):
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	50.	Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և նույնականացման ծրագրի մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացում	– **կենդանիներին համարակալման, գրանցման ծրագրի մշակում միջազգային մոտեցումներին համապատասխան,** Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և նույնականացման ծրագրի մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացման շրջանակներում Ծառայության և Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի (CARD) համատեղ ջանքերով մշակվում է Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համարակալման, նույնականացման և գրանցման ծրագիր (HAI&R), որի շրջանակներում մշակվել է աշխատանքային պլան (ճանապարհային քարտեզ), որով արտացոլվում են իրականացվող գործողությունների հաջորդականությունը և դրանց իրականացման համար նախատեսված ժամանակացույցը: – **միջազգային դոնոր կազմակերպությունների հետ ծրագրի իրականացման ֆինանսավորման հարցի քննարկման անցկացում** Ծրագրի շրջանակներում միջազգային փորձը ուսումնասիրելու նպատակով Ծառայության աշխատակիցները գործուղվել են՝ Ավստրիա, Գերմանիա, Բելառուս և Վրաստան: Ծրագրին իրենց պատրաստակամությունն են հայտնել աջակցելու ՄԱԿ-ի Պարենի և գյուղա-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			տնտեսության կազմակերպությունը (FAO), Հարավային Կովկասում շվեյցարական համագործակցության գրասենյակը և Համաշխարհային բանկը: Ծրագիրը ֆինանսավորելու նպատակով նախատեսվում է Ավստրիական զարգացման գործակալության (ADA) հետ ստորագրել փոխըմբռնման հուշագիր:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	51.	Ըստ արտադրատեսակների և գործունեության իրականացման տեսակների, սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգի ներդրման հայեցակարգի մշակման աշխատանքների իրականացում	– **պետական վերահսկողության կազմակերպման և իրականացման գործընթացների թվայնացման աշխատանքներ,** Ծառայության կողմից ուսումնասիրվել է սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգի միջազգային փորձը: Մշակվել է տեխնիկական առաջադրանք ռեյտինգավորման հայեցակարգի մշակման նպատակով: Ռեյտինգավորման ծրագրի իրականացման համար Ծառայությանն աջակցում է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը. վերջինս պայմանագրային հիմունքներով պատվիրակել է «Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն» ՀԿ-ին իրականացնել պիլոտային ծրագիրը, որի շրջանակում Ծառայություն է հրավիրվել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետ, որի հետ համատեղ իրականացվել են այցելություններ կաթնամթերք և մսամթերք արտադրող խոշոր կազմակերպություններ: Կազմակերպվել են հանդիպումներ տնտեսավարող սուբյեկտների հետ, որոնց տրամադրվել են հարցաթերթիկներ հետագա աշխատանքները առավել արդյու-

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			նավետ կազմակերպելու նպատակով: – սահմանային և տարածքային պետական վերահսկողության արդյունքներով՝ ըստ արտադրատեսակների և արտադրողների ռիսկերի վերհանում և վերլուծություն, (կատարման ժամկետը սահմանված է՝ 2017թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) Պետական վերահսկողության կազմակերպման և իրականացման գործընթացներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Ծառայության կողմից նախապատրաստվել և կիրառվում է անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի, անվտանգության սերտիֆիկատների և համապատասխանության տեղեկանքների հաշվառման էլեկտրոնային համակարգ, սահմանային վերահսկողության կազմակերպման և իրականացման աշխատանքներում ռիսկերի գնահատման նպատակով մշակվել է ռիսկայնության ավտոմատացված հաշվարկող համակարգ (ռիսկերի թվային հաշվիչ), որը տեղադրվել է Ծառայության կայքում, թվայնացվել են նմուշների լաբորատոր փորձարկումների նպատակով լաբորատորիաների ընտրության, ներմուծման և արտահանման սերտիֆիկատների տրամադրման գործընթացները և այլն: Ներկայումս աշխատանքներ են տարվում Ծառայության էլեկտրոնային կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ, որը կսպասարկի Ծառայության հիմնական գործառույթների կատարումը բոլոր փուլերում:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			Այդ նպատակով մրցույթ է իրականացվել՝ Ծառայության էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի գործածման նպատակով անհրաժեշտ նոր մոդուլների ստեղծման և ուսուցման, նախկին մոդուլների լրամշակման և ուսուցման, ուսուցողական ձեռնարկների ստեղծման, անհրաժեշտ ծրագրավորման աշխատանքների կատարման և հետագա սպասարկման ծառայությունների մատուցման ուղղությամբ: Մրցույթը հաղթող ճանաչված «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ի կողմից ներկայումս իրականացվում են համակարգի մշակման և ծրագրավորման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել սույն թվականի դեկտեմբերի վերջին: - **կոմպարտմենտալիզացիայի սկզբունքների մշակում** Ծառայության կողմից դաբաղի նկատմամբ կատարվել է ՀՀ տարածքի անասնահամաճարակային գոտիավորում, ինչը կնպաստի իրականացնել ռեյտինգավորում, Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության հսկողության դաշնային ծառայության մասնագետների մասնակցությամբ հանրապետության բոլոր մարզերում կատարվել են նմուշառումներ, դաբաղի նկատմամբ իրականացվել են շճաբանական հետազոտություններ, և արդյունքում իրականացվել է գոտիավորում, որը ուղարկվել է ՌԴ ԳՆ անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության ծառայություն ՀՀ-ից ջերմային վերամշակված կենդանական ծագման

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			արտադրանքից բացի, նաև թարմ պաղեցված մսամթերքի արտահանման հնարավորության հարցը քննարկելու համար:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն)	52.	Սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդելի մշակման աշխատանքների իրականացում	– **Ֆինանսավորման նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ քննարկումների անցկացում,** ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ և ֆինանսավորմամբ «Հայաստանի Հանրապետության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության տեխնիկական աջակցության»՝ TCP/ARM/3602/C2 ծրագրի շրջանակներում Հայաստանում նախատեսվում է սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման կարողությունների ուժեղացում: -ներկա իրավիճակի և կարողությունների գնահատման նպատակով միջազգային փորձագետների այց և քննարկումների անցկացում, (կատարման ժամկետը սահմանված է՝ 2017թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) Սկզբնական փուլում նախատեսվում է իրականացնել երկրում առկա կարողությունների գնահատում, փորձագիտական աշխատանքներ, տվյալների հավաքագրում և քարտեզագրում, որը կավարտվի 2017թվականի վերջին: – **Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման կարողությունների զարգացման ծրագրի**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
			մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագիտական խմբի հետ իրականացվել է հանդիպում, որի ընթացքում քննարկվել են ոլորտային ռիսկերի գնահատման, կառավարման և հաղորդակցության գործընթացների բարելավման, ինչպես նաև դրանց գնահատման արդիական մեթոդների ներդրման հնարավորությունները: 2017 թվականի հոկտեմբերին իրականացվել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ միջազգային փորձագետների այց «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ, որի ընթացքում կատարվել է գիտական կենտրոնի ռիսկերի գնահատման կարողությունների նախնական գնահատում, որից հետո կմշակվի սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդելը: